

գեղեցիկ աստղն առաւաւտու, որ մերթ երեկուն երանէ, գեղեցիկ երեւի եւ մեզ մարմին չափակեալ անձամբ. ո՞չ նովաւ յառնեն մարդիկ ի գործս անողալ եւ գազանք պատաստողք որջանան եւ գողք եւ աւագակք սուզանին եւ դէմք թշնամեացն եւ սիրելեացն երեւին: Լուսով ուղղին պէսպէս արուեստք կենցաղոյս. լուսով ընտրին ակունք եւ մարգարիտք ի յաւազոյ եւ ի խճոյ. լուսով ցնծայ ամենայն կենդանի. լուսով տեսանին⁸² ամենայն արարածք ի փառս արարչին Աստուծոյ: Կրէ լոյս եւ գայլ սյլում լուսաւորիչ գործել, որպէս նախ դաւղ եւ ապա գոսկի եւ դարձաթ եւ քակն եւ գապակի, որ նշոյլ արձակեն յալովս ի խնդութիւն տեսանողացն: Եւ եթէ այս արարածական լոյսս այսքան բարի եւ գեղեցիկ է, քանի՞ եւս⁸³ առաւել արարիչն սոցա, որ ասաց. «Ես եմ լոյս աշխարհի⁸⁴», որ զիմանալի աշխարհն եւ գմիտս լուսաւորէ: Անուանեաց եւ գաշակերտան «լոյս» տիեզերաց⁸⁵. Լոյս է եւ պատուիրանն նորա ի մէջ եկեղեցւոյ սրբոյ: Եւ որպէս այս խաւար փախչի ի լուսոյ, գգալի եւ իմանալի խաւարն, սատանայ եւ մեղք եւ անգիտութիւն յիմանալի եւ յաստուածային լուսոյն⁸⁶:

22. «Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ եւ զխաւարն կոչեաց զիշեր»: Որ զգեցաւ զլոյսն եւ յորժամ արեգակն գլխին կիսագունդն անցանէ, գայն կոչեաց, գոր սովոր եմք աւր անուանել, որչափ տեւէ լոյսն յաւա պար: Նախ կոչեաց զանուն աւուրն ի պատիւ նմա. ապա երկրորդ գլխաւորին, զոր ասացաք աւգ անլոյս եւ ստուեր տեղոյ: Զգլխաւոր արարածոց անուանս ինքն կոչեաց եւ զմանաւորն Ազամայ Տրամայեաց, հաղորդ կազմելով առնել իւր⁸⁷: Գիշեր, զի գոյն գէշ զգենու⁸⁸ աւգ եւ սյլք բազումք:

23. «Եւ մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին»: Անջրպետեաց ի մէջ երկուցն՝ տուրնջեան եւ գիշերոյ. գերեկոյն եւ գառաւաւտն. այս է մեկնելն. սահման եւ միջոց, զի զկարգս իւրեանց պահեսցեն եւ պաշտեսցեն զկամս արարչին:

82 Չ. տեսանի:
83 Չ. եւ:
84 Յովհ. Բ. 12:
85 Մատթ. Ե. 14:
86 Բարսեղ, էջ 37—38:
87 Բարսեղ, էջ 39: — Վարդան, 11ր:
88 «Գիշեր, զի գոյն գէշ զգենու». բոսորայի նկատելու է:
89 Չ. սպասու աստուած:

24. «Եւ ետես Աստուած զի բարի է»: Յառաջ քան զլինելն զիտէր, զի բարի է. այլ ըստ մարդական մտաց զիջանէ:

25. «Եւ եղև երեկոյ». սպասուած⁸⁹ աւուրն. «Եւ եղև վաղորդայն». աւարտ գիշերոյն: Ընդ տիւն եւ ընդ գիշերն աւր մի: Ոչ որպէս Երբայեցիքն եւ Ասորիք, որ գերեկոյն զնեն սկիզբն աւուրն, այլ ըստ արարչութեան. ի ծագել լուսոյ առաւաւտուն մինչեւ ի նոյն ժամն՝ աւր մի. զի մարթի լուսոյն լինել սկիզբն աւուրն եւ ոչ խաւարն. որպէս ասէր Յոր. «Յորժամ լինի առաւաւտ, ասիցեմ. Ե՞րբ իցէ երեկոյ. եւ յորժամ երեկոյ՝ ասիցեմ. Ե՞րբ իցէ առաւաւտ⁹⁰»: Զի քսան եւ չորս ժամն կատարեն օր մի: Ոչ ասաց մի աւր եւ մի գիշեր, այլ ի մի պարունակեաց գերիւս: Եւ այս սովորութիւն պահեցաւ մինչեւ ցայժմ. գաւրն միայն թուել եւ ոչ զգիշերն. ասէ Դաւիթ. «Աւուրք իմ որպէս հովանի անցին⁹¹». Եւ Յակոբ առաջի փառանի⁹²:

26. Եւ ընդէ՞ր ոչ ասաց առաջին, զի այս ի դէպ էր անկանել սյլոցն ասելոյն, թէ աւր երկրորդ եւ երրորդ, այլ ասաց «աւր մի». նախ գայն է ասելի. միտք բանիս զի մի է բնութիւն աւուրոց. զի իւրաքանչիւր աւր զմի եւ գնոյն արեգակն ունի գոյացուցիչ. եւ կամ զի յայտ արացէ, թէ անցաւոր են ամենայն աստէն իրքս. որպէս մի աւր պատի զինքեամբ, թէ պէտ եւ թն անուանի. այլ [զ]նոյն աւր է որ առնէ զշարթն: Եւ այս ցուցանէ, թէ հաստատ ոչ մի ինչ է յայսց իրաց, այլ ամենայն փոփոխականք: Դարձեալ՝ զատ, մեկնեաց զնա յայլ աւուրոց. զի նա է վերջին աւր անփոխանորդ եւ աներեկ, աւր առաջին զուգակից լուսոյն որ եղև ի նմա. աւրն սուրբ միաշարթուն, որ է պատուիչ յարութեան Գրիստոսի ի կեանս մարդկան, որ ի նմա յառնեն ամենայն ծնունդք Ազամայ յատեանն ահաւոր, եւ առնուն զիւրաքանչիւր զարժանն. զի աւր մեծ է նա մեծի ծագմանն Աստուծոյ: Աւր մի ի միուսն աշխարհի. զի որպէս անցաւոր կեանք մարդկան միաբան են ընդ աշխարհս, սոյնդունակ կեանքն հանգերձեալ հաղորդ են անսպառ յաւիտեանին: Վասն զի թէ մեք յայլ տեսակ⁹³ փոխելոց եմք,

90 Հմմտ. Յոր, Ե. 4:
91 Մաղձ. ձեռք. 4:
92 Կ'ակնարկէ Մն. Խէ. 9. «Աւուրք կենաց իմոց զորս պանդխտեաց ձև ամ է»:
93 Չ. տեսակի:

յայտէ թէ եւ արարածքս փոփոխելոց են յայլ տեսակ փառաց, զի ունիցի հաղորդութիւն ընդ անեղծ կեանս մեր: Այն աշխարհ մի եւ աւր մի եւ անուն նորա մի⁹⁴:

Հ. Ն. ԱԿՆԵԱՆ

ՎԵՐՊԵՆ Վ. ԲԵՂԻՇԵՑԻ
ՆՈՒՆՋՆՈՐԳ ԵՍԻՐՏՈՒՆՆԵՐՆԵՐ

(ԲԱՂՆԻ ԴՊՐՈՅՐ. § 25)

Բաղէչի Դպրոցին նշանաւորագոյն ներկայացուցիչն ու անոր վերջին փառքն եղաւ Վարդան Բաղիշեցի, որ էր ծննդեամբ Խողջ գիւղաքաղաքէն:

Իր ծնողքն են Եղիա եւ Ղարիպ, եւ եղբայրները՝ Ղարիպջան, Խաչատուր եւ Խոջխապար: Մնած եւ վարժած է Ամիրտօլի վանքին մէջ ի մանկութենէ, առ ոտս Խաչատուր վարդապետի, որ առաջնորդն էր վանքին: «Եւս բազում աշխատութիւն ունի ի վերայ նորա ի գրոց սերտցուն (ա՛յսպէս) Բարունեց Յովհաննէս վարդապետ» (Պօղոս Գաւառցի 1672): Օծուած է կուսակից քահանայ Բաղէչի Մեսրոպ Կախկոպոսի ձեռքով (1650⁹⁰), իսկ գաւազանի իշխանութիւնը ստացած է Խաչատուր վարդապետէն (Դաւիթ Բաղիշեցի, Դիւան, Ժ., 34): Որովհետեւ նաեւ Դաւիթ Բաղիշեցի (Խնդրակատարէն) ձեռնադրուած էր նոյն Մեսրոպ Կախկոպոսէն, այս պատճառով կ'անուանէ զանիկա «հոգեւոր եղբայր մեր Վարդան վարդապետ, ճարտասան եւ բանիւրուն» (անդ): Այս երեքը, Մեսրոպ, Դաւիթ եւ Վարդան կը նկատեն իրենք զիրենք «երեք հարագատներ», եղած են յաճախ ի միասին, եւ ապրած միասիրտ եւ միաբան:

Խաչատուր Վ. Բաղիշեցի, որ առաջնորդն էր Ամիրտօլի վանքին, աշակերտն էր Յովհաննէս Բուժիկ Բաղիշեցոյ. վախճանած է 1662ին եւ թաղուած նոյն վանքին մէջ (Դիւան, Ժ., 54): Կը յիշուի 1654ին «Խա-

⁹⁴ Բարսեղ, էջ 39—41, բազում արար: — Վարդան, 12ա—բ:

չատուր բարուն մեծ Բաղիշեցի» (Երուսաղէմ 354): Վարդան երախտագէտ գտնուած է միշտ հանդէպ իր ուսուցչին, կը պարծի անոր աշակերտած ըլլալուն վրայ, «աշակերտ մեծ բարունոյն Խաչատուր Բաղիշեցոյ», կ'անուանէ զանիկա «ըստ հոգւոյ ծնօղն իմ Խաչատուր անյաղթ պուշտոս եւ փիլիսոփոս Հայոց, հայր իմ, որ բազում երկամբք ծնաւ զիս վերստին ի յոյսն իմ կենդանի Քրիստոս» (1659):

Պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Վարդան 1651ին. երբ կը նորոգէ Յովհաննէս սարկաւազ Վիեննայի Թ. 571 ձեռագիրը եւ Վարդան ձեռագրին պակասները կը լրացնէ 1651 եւ 1656 տարիներուն. այս առթիւ գրած է Յիշատակագրութիւններս. 1. «Չանձինս բարեաց եւ զծնօղս յորովակի չարեաց, տիպ տղմասիրի խոզոյ բազմագաւակի գ՛վարդան վարդապետս Բաղիշեցի աղաչեմ յիշել ի Տէր. թվին Ռձի (այս. Ռձի) զրեցաւ» (թղ. 248ա):

2. «Վերստին նորոգեալ եղև սուրբ գիրքս որ է Մեկնիչ Տեսլեան սրբոյն Յովհաննէս Աւետարանչի եւ Լուծմունք գժուարիմաց բանիցն Եւազրեա հօրն անապատի, ձեռամբ Յովանէս սարկաւազի, ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն Խանէսին եւ Նշաչին (այս. Նիսիսին) եւ հանգուցեալ եղբաւր Խըլաթին, ի դուռն Ամիրտօլու սուրբ Յովանէսին: Այլ եւ յիշել աղաչեմ գեղկելի Վարդանս, որ բազում սատարութիւն ցուցի, զի աշակերտ իմ էր. . . . թվին ՌձԵ (1656) յամին, յորում բազում անցք անցին ընդ մեզ յազգէն Մարաց, զի ոտքմ եղևալ ընդ իրեարս՝ զմիմեանս սպանանէին եւ զմեզ յաւարի առնուին. . . » (թղ. 335ա):

3. «Գրեցաւ սակաւ այս բան թվին ՌձԺԲ (1669) ձեռամբ Վարդանայ լոկոյ եւ տրպի (այս. դպրի) վարդապետի Բաղիշեցոյ. . . : Յիշատակ է այս Ամիրտօլու սուրբ Յովհաննէսին ի Բաղէչ ի ձեռս մեր» (թղ. 334ա: Վիեննա, Թ. 571, Յուլիան, էջ 1039): Վարդանի զրէչն են թղ. 247ա—249բ, 333բ—334ա լրացումները: Յովհաննէս կազմած է լոկ եւ կիսով պատուած թուղթերը անգիր թուղթով կարկատած. Ձեռագրին Ա. մասը կը կազմէր (թղ. 1ա—22ա) եփրեմի Գործք Առաքելոցի Մեկնութիւնը, սկիզբն պակաս. Վարդան չէ անդրադարձած այս կէտին (հմմտ. թղ. 335ա):

Այս շրջանին է, որ Սարգիս Ամթեցի Ամիրտուղի վանքը կու գայ ուսանելու: Սա տակաւին ջահընկալ՝ կ'օրինակէ 1651ին Վարդանի համար. Սորհրդատեւոր մը, որուն վերջը կը գետեզէ իր 5 էջ ոտանաւոր ընծայական մը (Թղ. 22ա—26բ): Վարդանն էս ունի հոն երկու Յիշատակագրութիւն (Թղ. 18բ եւ 21բ)՝ վերջինը, ինչպէս կը տեսնուի, տարիներ վերջը գրուած, որ հետեւեալն է «Յիշեցէք... զՎարդան շարժիտ արեւոյս... այլ եւ յիշել զգրոյ սորա զՍարգիս Յամթեցին, որ յորժամ գրեաց՝ սարկաւագ եւ այժմ... կրօնաւոր եւ վարպետ Հայաստանեայց»։ Եւ կը յայտնէ թէ ձեռագիրս իր մահէն ետքը պէտք է ուղարկուի Երուսաղէմ Ս. Յակոբեանց վանքը (Երուսաղէմ, Թ. 2274):

Աւելի կանուխ ժամանակ մը կ'ենթադրէ Մխիթար Գոշի Երեմիայի Մեկնութեան վերանորոգութիւնը, որուն Յիշատակարանը Վարդանի ձեռքէն է: «Նորոգեցաւ տառս եւ սովեալսս եւ մատնանս աստուածախօս մարգարէին Երեմիայի, մեկնեալ քաջ փաղերային եւ երախտաւորին Հայոց Գոշին Մխիթարայ համառու եւ քաղցր բանիւ, յօգուտ ընթերցողաց: Գոր եւ գրեցէ գնա Տէր ի գիրն անջնջելի կենացն յաւիտեանց: Եւ սուրբ ազօթիւք նորին եւ ընդ մեզ հաշտեցի անխակալութեամբ»:

«Եւ զի էր տառս այս յանհոգութենէ աշխարհասիրաց այրեալ եւ փտեալ եւ կարկամեալ դիւրաւեղծ նիւթն սորա, զաւրէն տառապեալ անանկի: Գոր եւ տեսեալ զսորայս փարթամութիւն անկեալ ի գետնի, սիրելի եղբայրն մեր Սարգիս, որ ի կարգի է աստիճանաց սրբոյն Ստեփանոսի, եւ հասեալ ի վերայ՝ կորզեաց զտառս ի ժանդահոս վայրէն եւ վերատեալ զսա իրր զմարգարիս ի տղմէ, եւ ուրախամիտ մտօք կարկատեալ զսորայս հնութիւն բազմաշխտս եւ վշտակիք ջանիւ, եւ զկնի աշխատեալ ի խոյզս արինակի եւ հազի գտեալ յաջողմամբ Տեառն: Եւ սոցա քաջարեալ գտկարութիւնս մեր սա ի յ(ը)նկերել ինքեան ի գրել զպակասն եւ զեղծեալսն: Եւ մեր վշտացուցեալ գնա մեր անհամբերութեամբս բազմագիծի: Եւ կարողութեամբ հաստէն Յիսուսի այժմ աւարտեցաք ի փառս նմայ, ի թուականիս Հայոց ՌձԹ (1653) ի քաղաքս Բաղէշ, ի մենաստանս Ամիրտուղի սուրբ Յոհաննու Մկրտչին եւ այլոցն: Զոր եւ կողկողակն պաշտանօք

հայցեմ ի հանդիպողացդ հայցել յաննախանձ գթոյն Քրիստոսի փշրանս ողորմութեան մեզ մուրոզացս ի ձէնջ. եւ յիշել յաղօթս զՍարգիս քաջ երաժիշտն եւ զարագակր գրչապետն եւ նկարողն. եւ ախորժ մտաւք Աստուած ողորմիտակ նորին եւ ծնողացն իւրոց: Որ է սա ի Միջագետաց, ի քաղաքէն յԱմթայ, եկեալ աստ վասն տքնութեան սուրբ գրոց ընթերցման. որ եւ իսկ ունի զցայտաջան աշխատութիւնն՝ զեզերեալ ի գրունս իմաստից միշտ. զոր եւ լցուցէ Տէր գանձկութիւն ըզձից փափագանաց սորա. որ աննախանձն է ի տուրս շնորհաց. եւ յիշեցէ անմոռացութեամբ զձեզ յիշողքը եւ զյուսողքս եւ զծնողսն մեր. եւ զիս զսակաւ տաժանոցս Վարդան ի միւսանգամ զարուստն. ամէն: Առաջին գրողին յիշատակարանն անկէր. յիշեցէ գնա եւս Տէր ողորմութեամբ իւրով. ամէն»:

«Կագմեցաւ սուրբ գիրքս ձեռամբ Վարդան անարժան սորկի: Յիշեցէք զվայելող սորայ զՍարգիս եւ զծնողսն զՍուրահին եւ զՎարդան զհայրն եւ Աստուած ողորմիտացէք. ամէն»:

Այս վերջին հատուածը Վարդանի գրչով գրուած է (Զմմառ, Թ. 349, հ. 63):

1658ին նորոգուած է Միքայէլ Ասորւոյ ժամանակագրութիւնը «ձեռամբ իմ մեղապարտ Վարդան պիտականուն բանասիրի» (Դիւան, Ժ., էջ 1Թ):

1659ին նորոգած է Աստուածաշունչ մը, զոր նուիրած է Լիմի անապատին. իր գրչէն է Յիշատակարանս:

«Յիշել աղաչեմ զեզկելի անձս Վարդան ի յոյն իմ Քրիստոս, որ զԱստուածաշունչս նորոգեցի բազմամեայ տաժանմամբ. ամէն:

«Վերջին ստացող եւ զկրկին նորոգող սուրբ կտակիս, որ Աստուծոյ շունչ վերաձայնի՝ յերէն ընկալեալ զանուանակոչութիւնն, որ է Հին Կտակարանքն ԻՊ գիրք պատմագրական եւ պիտանի[ն]. ձեռամբ իմ մեղապարտ Վարդան յոյժ եղկելոյ եւ թշուառի, պիտակ բանասիրի... Որ եղիւ սա գրեալ ի դուռն Ամիրտուղի սուրբ Յովանիսին եւ սուրբ Ստեփանոսին եւ սրբուհոյ ամենօրհնեալ Աստուածածնին. որ ընդ հովանեաւ սոցա նորոգեցաւ ի ժամանակս յոյժ նեղութեանց եւ վշտաց անթվելեաց... Այլ եւ զբոս հոգւոյ ծնողն իմ զՍաղաւորսն անյաղթ պուկտոսն եւ փիլիսոփոսն Հայոց՝ զհայրն իմ, բազում երկամբք ծնաւ զիս վերստին ի յոյն իմ կեն-

դանի Քրիստոս» յիշեցէք. «բոս սոյն եւ զծնողսն իմ բոս մարմնոյ՝ զհայրն իմ զԵղիա եւ զմայրն զՂարիպ. եւ զեղբարսն իմ զՂարիպան հանդուցեալն եւ զՍաղաւորսն եւ զՍոջխապարն»: «Նորոգեցաւ ի մայրաքաղաքս Բաղէշ, ի վանքս Ամիրտուղայ: Եւ կէս գրեցաւ ձեռամբ տէր Գրիգոր քահանայի... եւ այլն ձեռամբս իմով աւարտեցաւ բազում տաժանմամբ ի թվին ՌձԹ, ի հայրապետութեան տեառն Յակոբայ...»:

«Ես Վարդան վարդապետս Բաղիշեցի, աշակերտ տեսուն Սաղաւոր վարդապետի, ետու զսուրբ Աստուածաշունչս, որ է ԻՊ գիրք բովանդակ... այլ եւ ընդ նմին խաչ մի ոսկեզօծ եւ ակնանկուս՝ ձեռամբ իմով ի դուռն Լմայ անապատին Ս. Գէորգոյ զօրավարին յիշատակ հոգւոյ իմոյ... նաեւ աշակերտին իմոյ Աբրահամ վարդապետին» (Լալայեան, Յուլ., Թ. 4, էջ 26—28):

Կերեւայ ասկէ, թէ Վարդան 1658/59 տարւոյն գտնուած է Լիմ:

1663ին ի Բաղէշ կը նորոգէ 1533ին օրինակուած Գրիգոր Տաթևացոյ Յովհաննու Քաղաձոյն, որ կը պատկանէր Մեծոփի վանքին. «Զվերջին նորոգող լուսադարձ տեսարանչաց քաղուածուիս զՎարդան լոկ պիտակ անուն բանի սպասաւորս աղաչեմ յիշել ի Տէր... որ բազում տաժանմամբ եւ յոլով աշխատութեամբ սրբաքերեալ եւ զթերին լցեալ՝ յանկ եւ յաւարտ հանի...»:

Դարձեալ եւ զայս աղերսալի ժտեմք ի ձէնջ, եղբարք բարի, Որք ընթեւոնոյք յօժար սրտիւ, Յիշման ասնէք զիս արժանի, ԶՎարդան վարդապետս Բաղիշեցի, Որ յոյժ երկօք զայս նորոգեցի. Այլ եւ ծնողաց իմոց զարմի, Եղիայի եւ Ղարիպի, Այլ եւ եղբարց իմոց Ղարիպջանի, Սաղաւորի եւ Սոջխապարի: Ով մանկուք նոր Սիրնի Մի յապաղէք՝ զուք զմղորմին, Զի եւ ձեզ մասն կրկին ի Տեառնէ ընձեւեցի. ամէն:

Գրեցաւ վերջոյ գիծս ի թուականիս Հայոց ՌձԹԹ (1663), ի հայրապետութեան Տեառն Յակոբայ էջմիածնի, ի Բաղէշ քաղաքի, ընդ

¹ Տղ. յաշտեցէք:

հովանեաւ սուրբ ուխտիս որ Ամիրտուղի վանք վերաձայնի. օրհնեալ է Աստուած» (Դիւան, Ժ., էջ 1է եւ Պատուեան, Յիշատակարանք):

Վարդան առաջնորդ Ամիրտուղի վանքին: Սաղաւոր վարդապետ փախճանեցաւ 1662/63 տարւոյն: Անոր աթոռին վրայ յաջորդ անուանուեցաւ Վարդան: Ժամանակի մասին կը գրէ Վարդան 1672ին. «Ես յամի որ զգիրս ետու ծրել, Ժ. ամալ յառաջ փոխեալ է առ Տէր» իր հոգեւոր հայրն Սաղաւոր: Դաւիթ Բաղիշեցի, որ 1663ին կ'աւարտէ իր Պատմութիւնը, կը գրէր. «Ամիրտուղի վանք... դամբարան եւ դասատուն Բարեղ վարդապետի, Յոհաննէս (Բուժիկ) վարդապետի, Սաղաւոր վարդապետի հանգուցելոյ ի Քրիստոս. եւ այժմ տեսուչ եւ գլուխ ի նմա հոգեւոր եղբայրն մեր Վարդան վարդապետ, ճարասան եւ բանիրուն» (Դիւան, Ժ., էջ 54): 1663—1670 տարիներուն լրած են Յիշատակագիրները. Դաւիթ Բաղիշեցի խօսելով 1662/63 տարւոյ մասին՝ կը գրէ. «Եւ այժմ... ի ներքոյ բազում եւ անտանելի հարկի եւ նեղութեան եմք ամէնքս, զոր Տէր Աստուած այց արասցէ» (անդ, 54): 1669ին կենդանութեան նշան մը կու տար Վարդան վերադոյն բերուած Յիշատակագրութեան մէջ, որով կը յայտարարէր թէ վիեննայի Թ. 571 ձեռագիրը Ամիրտուղի վանքին կը նուիրէ:

Ուխտագնացութիւն ի Լիմ: 1669ին Վարդան իր երկու հարագատներու՝ Մեարոյ եւ Կարկոպոսի եւ Դաւիթ վարդապետի հետ ուխտի կ'երթայ ի Լիմ, ինչպէս կը գրէ Դաւիթ Բաղիշեցի. «Յիշեցէք զՄեարոյ վարդապետն եւ զիս զմեղաւորս զԴաւիթ տրուպս եւ զՎարդան վարդապետն, որ ի միտսին եկինք ի Լմայ սուրբ անապատս յախտ թվին ՌձԹԹ» (Դիւան, Ժ., 56):

Վարդան ի Տարօն: Այն ինչ վերագարձած Լիմէն՝ պատգամաւորութիւն կը հասնի Տարօնի Առաքելոց Վանքէն Բաղէշ, խնդրելու օգնութիւն տեղւոյն առաջնորդարանէն վանքին համար, որ կը գտնուէր պարտքերու տակ: Վարդան առած հետը Դաւիթ վարդապետն եւ Աբրահամ Վ. Ամթեցին, իր աշակերտը, «չու արարեալ ի տեղւոյն իւրմէ սակս աղաչանաց եղբարցն», կ'աճապարէ Տարօն: Վանքին առաջնորդն էր այս ժամանակ Ստեփանոս վարդապետ «որ մանուկ եւ տղայ» էր: Վարդան վանքի առաջնորդութիւնը կը յանձնէ Դաւիթ վարդապետին, պահելով ա-

նոր աթոռակից Ստեփանոսը: Կը ջնջէ վանքին պարտքերը. ետ կ'անէ գրաւի գրուած առարկաները, կը նորոգէ Եկեղեցւոյն գմբէթն եւ սագերը, իսկ Ս. Ստեփանոսի տաճարը որ Լանկթամուրի օրով կործանած էր, վերստին կը շինէ եւ այսպէս «ճաստատեաց եւ պայծառացոյց զՄենաստանս ժամակարգութեամբ եւ սաղմոսերգութեամբ»: Գրասէր Վարդապետը աչքի կ'անցնէ նաեւ վանքին Մատենադարանը, զոր կը գտնէ լքուած: Կը հրաւիրէ Վանեցի Սահակ վարդապետը, որպէս զի նորոգէ եւ կազմէ քայքայուած գրքերը:

Սոսքը կու տամ այս տեղ Յիշատակագրի մը, որ շատ ցոյցաւոր նկարագրութեամբ մը կը պատմէ Վարդան վարդապետի կատարած գործերը:

1671. «Արդ ով բարեգութ հարք իմ... յիշել աղաչեմ գերեքերանեան եւ գրագմբերախախտ քրանաջան աշխատողն զՎարդան Բաղիշեցի բարունապետն, զկրկին լուսաւորիչն, որ յերեկոյացեալ ժամուս ի վերջին դարուս սա միայնակ գորով փայլէ ի մէջ համայնից իւրովք գործովք եւ վարուք՝ որպէս արեգակն ի պարս աստեղաց: Եւ սա ամենայն ստաքինութեամբ դարգարեալ ի ներքուստ եւ արտաքուստ, մանաւանդ անաշատ քարոզող, կարկիչ անզգամաց եւ ստահակաց: Որ յանբարի ժամանակիս յաւել եւ գրարեգործութիւնս զայս ի վերայ ամենայնի, զոր ունէրն. եւ չու արարեալ ի տեղւոյն իւրմէ սակա ազանաց եղարացն եւ եկեալ ի մենաստանս սուրբ Առաքելոցն որ յանուն Եղիազարու առձայնի, որ անկեալ էր ի ծանր պարտուց ի ներքոյ. որ եւ իսկ եւ իսկ զձեռն արկեալ Աստուծոյ ամենակարող զօրութեամբ՝ վճարեաց զանասնելի պարտս մինչ գրեթէ լինել երկու հազարաց եւ աւելի:

Եւ զամենայն գրեանս եւ զարդիւնս վանաց գերծոյց եւ երեսուն գիրք վերստին նորոգեալ կազմեաց ի ձեռն Սահակի կազմարարի վանեցոյ:

Եւ զեկեղեցւոյ սագերն նորոգեաց ի հարուոյ կուսէ. զեկեղեցին սրբոյն Ստեփանոսի, որ ի Լէնկթիմուր բռնաւորէն քակեալ վերստին շինեալ ճաստատեաց. եւ պայծառացոյց զմենաստանս ժամակարգութեամբ եւ սաղմոսերգութեամբ: Կարգեալ ճաստատեաց առաջնորդ եւ սպասաւոր ժ. Առաքելոց՝ Գրաւիթ վարդապետ զհոգեւոր հարապատն իւր. եւ ինքն վերակացու եւ խնամատար գորով ամենեցուն՝ օր ըստ օրէ յաւելու ի շին-

նունն սուրբ Եկեղեցւոյ, ի բարեձեւութիւն սուրբ մենաստանիս: Զոր մաղթեմ եզրարցդ հարազատաց յիշել ի պաղատանս զՎարդան բարունապետն, զի անսոյթաք կենօք անցուցէ զկեանս իւր եւ յետ աստեացս երանելոյ ընդ սուրբ վարդապետաց դասուն պատկակից եւ դասակից արացէ գնա. ամէն: Թ՛վին ՌձԻ՛:

* Կազմեցաւ Մեկնիչս Ղուկասու Աւետարանչի ի թուարկութեան հայկազեան տուժարիս ՌձԻ՛ ի վանս Ղազարու, ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի Յակոբայ... եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Գաւիթ ճգնագրեաց վարդապետի եւ տէր Ստեփանոս կրօնաւոր հերապետի»:

Յիշատակարանս կը գտնուի Առաքելոց վանքի սեպհական Գրիգոր Տաթևացւոյ Յովհաննու Աւետարանի Գաղուածոյն մէջ, ուսկից արտագրած է Գեղամ Տէր-Կարապետան. նոյնը կայ գրեթէ բաւ առ բաւ, էջմիածին, Գէորգեան Բաթին, Թ. 174 (Իդնատիոսի Ղուկասու Մեկնութեան վերջը, ի բաց առեալ վերջին աստղանիչ հատուածէն: Թ. 174ի Յիշատակարանը քաղուած արար տես Երեւակ Գ. (1858), 202—203:

Այս անտեսական, շինարարական եւ մշակութական աշխոյժ գործունէութիւնը տեղի կ'ունենայ 1670/71 տարիներուն: 1671 աւգոստոս 2ին եւ 9ին երկրաշարժ մը կը ցնցէ Տարօնը: Թէ նորակառոյց շինուած քները որ եւ է փնաս կրեցին, յայտնի է: Բայց ուրիշ շարժումէ մը մեծապէս կը տուժէ Վարդանի ձեռնարկութիւնը: Սարգիս երէցի յիշատակագրութեան համաձայն 1671 ամառը «չահ Սուլէմանն³ եւ Չխալի խանն բռնեցին մեր առաջնորդ Գաւիթ վարդապետն (եւ) Ստեփաննոս վարդապետն»: Այս շատ հակիրճ ակնարկութեանէն կը տեսնուի թէ մերազգիներն եւ այլազգիները, շահագէտներն եւ պարտատէրները յայտնի եւ ընդ յատակեայ զժուարութիւններ եւ թշնամութիւններ յարուցած են վանքին եւ անոր վերանորոգիչներու դէմ, որոնք կրկնուեցան նաեւ 1705—1710 տարիներուն, ինչպէս պիտի տեսնենք: Վարդան, որ զլիաւոր պատասխանատուն էր, խոհեմական կը համարի խոյս տալ. կ'իջնայ Միջագետք. կը կարնաւորուին Գաւիթ վարդապետ եւ Ստեփանոս հերպէտ: Այս խնամով միայն կարելի է հասկնալ Պողոս Գաւառացւոյ տողերս,

³ Շահ Սէֆի Բ. Սուլէյման, 1666—1694:

գրուած 1672ին. «որ (Վարդան) յայտ ամի ի հարածանս է յանիժեալ ազգէն Մահմետականաց յերկիրն Սուրացոց, որ այժմ Հագու վերածայնի. որ յայտ հարածանաց միջի ետ գրել զգիրս (պատմագրաց) յիշատակ իւրն» (Արարատ, 1891, էջ 150):

Գաւիթ վարդապետ հաւանորէն կ'արտաքուստ Տարօնէն. ան 1673ին Բաղէշ է: Ստեփանոս մանկահասակ վարդապետի փոխանակ առաջնորդ կ'ընտրուի Յովհաննէս: Նոյնպէս Վարդան բարեաւ կը վերադառնայ Բաղէշ:

Ուխտագնացութիւն ի Լիւմ: 1673ին երկրորդ անգամ կը միարանին երեք հարազատք երթալու Լիւմ անսպաս: Հագու ոտք գրած կղզւոյն վրայ՝ կը վախճանի Գաւիթ վարդապետ (31 դեկտ. 1673) եւ կը թաղուի այն տեղ:

Սահակ Վանեցի, որդի Ամիրջանի եւ Չինարի, ծագած էր Վանի շրջանին մէջ իրբեւ քաջազիր գրեչ, վարպետ մանրանկարիչ եւ ճարտար կազմարար: Ունինք իրմէ նկարագրուած Շարակնոց մը, գրուած 1662ին ի Սուրս Մոկաց, Վարդան գրիչէն, զոր ստացիչը տէր Մեսրոպ յանձնած է Սահակի «գծագրել զսա գանազան»: Նկարիչը առաջին նկարին տակ ստորագրած է. «Ձատապեալ Վանեցի Սահակ ծաղկող յիշեալ» (Միւնիսէն, Թ. 22. Գալէմբեարեան, Յուլյակ, էջ 32—33): Ան համբաւուած էր արդէն: 1671ին զինքը Առաքելոց վանքը կը կանչէ Վարդան, նորոգելու փնասուած, կազմալուծուած ձեռագիրները: Կը հետեւի հրաւերին. կ'երթոյ Առաքելոց վանքը կը մնայ երկու տարի եւ կը նորոգէ աւելի քան 45 գիրք: Ապա, Վարդանի խնդրանքով, կը փոխադրուի Բաղէշ, նորոգելու Ամիրսոյի վանքի ձեռագիրներն եւ ուսուցանելու զրջութեան, մանրանկարչութեան եւ կազմարարութեան արհեստները: Իրեն կ'աշակերտին Յովհաննէս երէց եւ Գրիգոր զպիր: Կը նորոգէ 75 ձեռագիր, ինչ ինչ ձեռագիրներ ալ կը նկարագրողէ: Երկու տարի կը զեզերի Բաղէշ. առիթ կ'ունենայ հոն մասնաւորներու համար ալ օրինակելու եւ ծաղկելու ձեռագիրներ (1674—1676): Վերջացնելով իրեն եղած յանձնարարութիւնները կը վերադառնայ Վան:

Ըստ վաղեմի սովորութեան, երբ կը նորոգուի ձեռագիր մը, նորոգողն եւ կամ ուրիշ մը անոր կողմէ՝ կը կցէ յիշատակագրութիւն մը: Այսպէս նաեւ Սահակի նորոգած յիշեալ իրը 120 ձեռագիրներն ունին

նման յիշատակագրութիւններ, գրուած առաւելապէս Արրահամ Վ. Ամթեցիէն: Այս ձեռագիրներէն ոմանք հասած են մեզի, ուրիշներ տեսնուած են ԺԹ. դարուն եւ ցուցակագրուած: Ունիմ աչքի առաջ այդ Յիշատակագրութիւններէն մէկ քանին: Անոնք ընդհանրապէս միակերպ են: Յառաջ կը բերեմ քաղուած արար այն տեղիքները, որոնք ժամանակակից անձինքներու եւ դէպքերու մասին ակնարկութիւններ կը բովանդակեն:

1671. «Ձգերահրաշացեալն հոգւով եւ զպերճացեալն բանիւ իմաստութեան զԲաղիշեցի Վարդան բարունապետս յիշեալիք առ յոյն ամենեցուն Քրիստոս հանդերձ հարազատան իւրով Գաւիթ վարդապետիւ: Նաեւ... զԱրրահամ բանի սպասաւորս եւ աշակերտ տեսան Վարդանայ յիշել ի Տէր աղաչեմ...: Կազմեցաւ սուրբ տառս ի թուակահարութեան... ՌձԻ՛. ի վանս Եղիազարու... յառաջնորդութեան սրբոյ ուխտիս տէր Գաւիթ ճգնագրեաց վարդապետին եւ տէր Ստեփանոս հայրապետին ձեռամբ անարհեստ Սահակայ Վանեցւոյ եւ Կարապետի» (Տօնապատճառ Առաքելոց վանքի. Գ. Տէր-Կարապետան, Ձեռագիրք Տարօնի. Դիւան, Ժ., էջ ԼԹ):

1671. «Բաղիշեցի Վարդան վարդապետ ՌձԻ՛ թուին Առաքելոց վանքի գրքերը նորոգել եւ կազմել կու տայ Սահակ Վանեցի վարդապետն «օգնականութեամբ համշիրակ եղոր մերոյ Գաւիթ վարդապետին», որ ներկայապէս Ղազարու վանքին առաջնորդն է: Վարդանի աշակերտներէն կը յիշուին Արրահամ Վ. Ամթեցի եւ Սարգիս զպիր» (Պատուրեան, առած Միւրթ. ձեռագրէ մը):

1673. «Ձգերագանցեալն հոգւով...: Չի Եղիազարու վանաց գրքերն .Ս. հին փոխալ գիրք վերստին ետուն նորոգել եւ կազմել եւ զեկեղեցւոյ սալքերն եւ զգումբեթն վերստին նորոգեաց եւ զեկեղեցի սրբոյն Ստեփանոսի ի հարաւոյ կուսէ եկեղեցուն վերստին շինցուց (Դիւան՝ ի հիմանց շինեաց եւ պայծառացոյց) զսուրբ Մենաստանս ժամակարգութեամբ եւ սաղմոսերգութեամբ...:

Կազմեցաւ Լուծմունքս ի դուռն սուրբ Առաքելոցն ձեռամբ մեղապարտ Սահակ վանեցւոյ ի թվ. ՌձԻ՛» (Գեղամ Տէր-Կարապետան, Ձեռագիրք Տարօնի. Գր. Տաթևացւոյ Լուծմունք Յովհաննու: Դիւան, Ժ., էջ ԼԹ, ձառք Յովհ. Որոտնեցւոյ):

1673. Սահակ Ի խնդրոյ Աւետարանի եւ կողակցին Կիւլփարդին կ'օրինակէ Աւետարան մը. «Եւ արդ գրեցաւ, ծաղկեցաւ Ս. Աւետարանս յերկիրն Տարօնոյ (Ի) Մուշ, Ի վանս Եղիազարու, Ի դուռն ԺԲ. Առաքելոց եւ այլ բազմախումբ սրբութեանց եւ սրբոց դամբարանաց որք աստ կան հաւաքեալ, ձեռամբ... Սահակ Վանեցոյ Ի թվ. Հայոց ՌՃԻԲ. Ի հայրապետութեան... Յակոբոյ... կաթողիկոսի, յառաջնորդութեան սուրբ ուխտիս Յովհաննէս եւ Գաւթի վարդապետացս եւ աստուածարան զիտապետացն եւ Ստեփանոսի կրօնաւորին, որ մեզ խնամածու, բերկրելէ. եւ այլ միտարան եղբարց որ աստ կան հաւաքեալ. վարձս բարեաց պարգեւեցէ Տէր... Յիշեցէք զմեղապարտ Սահակ զպիլ, զճնորդսն իմ զԱմիրջան եւ զԶինարն եւ զեղբարսն իմ զՍտառղէն եւ զամենայն մերձաւորսն իմ... Եւ եղև սկիզբն սուրբ Աւետարանիս Ի մարտի ամսոյ ԺԲ. ն եւ զրան յապրիլի վեց... Այլ եւ յիշել աղաչեմ զԲաղիշեցի աստուածարան վարդան վարդապետն, որ յայս ամի բերեալ զմեզ Ի Վանայ եւ նստոյց Ի վանս Ղազարու եւ գնորին փտեալ եւ փերեւեակալ գրեանս ԽԳ. զիբք վերստին ետ կազմել եւ նորոգել. եւ բազում շինութիւնս եւ պարտս վճարեալ, զոր մաղթեմ... յիշել... զՎարդան բարունապետն եւ գնորին աշակերտն զԱրրահամ վարդապետն...» (Աւետ. Մուշի ձեռնարկն թաղի Ս. Կիրակոս եկեղեցոյ: Գ. Տ. Կարապետեան):

Ասկէ կը տեսնուի, թէ Սահակ վերջացուցած է ձեռագիրներու նորոգութիւնը յընթացս 1671—1672 տարիներուն եւ 1673ին սկիզբը ազատ՝ ձեռնարկած է Աւետարանի օրինակութեան, զոր գրած է 25 օրուան մէջ. ապացոյց մը իր արագագործութեան: Ան մեկնամ ըլլալու է Տարօնէն 1673, ապրիլին:

Սահակ Վանեցի Տարօնէն անցած է Բաղէշ, նորոգելու Ամիրտուրի վանքին ձեռագիրները: Այս միջոցին Վարդան կը գտնուէր Բաղէշ: Առաջին անգամ քաղաքիս մէջ կը յիշուի Սահակ 1674ին: Այս տարւոյն Գրիգոր քահանայ կ'առաջարկէ Սահակի նկարագրել Աւետարան մը, զոր ինքը գրել տուած էր Կ. Պոլիս Յովհաննէս գրչի: Յանձն կ'առնէ Սահակ իրեն եղած առաջարկութիւնը. իր Յիշատակարանին մէջ կը գրէ.

«Եւ արդ ես մեղուցեալ եւ անպիտան ծառայս ձեր Վանեցի Սահակ զպիլս եկեալ իմ Ի քաղաքն Բաղէշ եւ ստացայ զուրբ Աւետարանս Ի քահանայէն Վարդանոյ տետր միայն սեաւ գրով: Եւ իմ բնակեալ Ի վանս Ամիրտուր, առ ոստ երանաշնորհ եւ աստուածարան վարդապետին Վարդանոյ՝ ամ մի եւ հինգ ամիս: Եւ ծաղկեցի վարդապետին երկու Աւետարան. ոսկեգօծ ետ ծաղկել: Եւ զհնացեալ գրեանս ետ վերստին նորոգել, թուով եօթանասուն եւ ութ գիրք: Չոր Տէր Աստուած անփորձ եւ անսոյթաք պահեսցէ զՎարդան բարունապետն եւ զաստուածարան զիտապետն, եւ զհարապետն իւր Արրահամ վարդապետն...»

«Ես մեղապարտ Սահակ Վանեցիս ծաղկեցի զուրբ Աւետարանս Ի վանս Ամիրտուր, Ի դուռն սրբոյն Յովհաննու եւ սրբոյն Ստեփաննոսի եւ Ս. Աստուածածնի տաճարիս եւ այլ սրբութեանցս, բազում աշխատութեամբ, ծաղկեալ ոսկով եւ լաջվարդով եւ այլ երկին երկին գունով վարդարեցի: Չոր տեսեալ մեծահաւատ... տէր Գրիգոր, ջերմ սիրով ստացաւ... Յիշել աղաչեմ միով Տէր ողորմեալիս զաստուապեալ Վանեցի Սահակ ծաղկոյս եւ զճնորդսն իմ զԱմիրջանն եւ զԶինարն, եւ զուսուցիչն իմ զմեծ բարունին զՍիմէօն Էջմիածնեցին. եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն» (Դիւան, Ժ., էջ 118. Լալայեան, Յուլի, Թ. 411, էջ 943—946):

Այս Սահակէն է նաեւ Էջմիածնի Թ. 2639 (Ագաթանգեղոս), ուր թղ. 4ր. Լուսաւորչի՞ նկարին տակ կը կարդացուի. «Յիշեայ զիս, Տէր իմ եւ ստեղծող, զՎանեցի Սահակ ծաղկոյ»: Չեռաղիրը գրուած է 1672ին: Սահակ վերադարձաւ ապա Վան. հոս 1680ին կը ծաղկէ Աւետարան մը. «Ծաղկեցաւ եւ կազմեցաւ ձեռամբ Սահակ Վանեցոյ թվին ՌՃ. եւ ԻԹ. Ի դրան սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի Ի առաջնորդութեան Եսայեայ վարդապետի եւ քաջ հետորի, Ի վայելումն սրբասնունդ տէր Յովհաննիսին» (Լալայեանց, Յուլի, էջ 587—570):

Իր աշակերտներն եղած են Ի մէջ այլոց Յովհաննէս երէց որդի Սահակոյ եւ Աննայի եւ Գրիգոր զպիլ: Ասոնցմէ են հետեւեալները: 1675. «Եւ արդ գրեցաւ սուրբ Աւետարանս Ի մայրաքաղաքս Բաղէշ, Ի դուռն Է. խորան եկեղեցոյ ձեռամբ... Յովհաննէս երկուս Ի թուականիս... ՌՃԻ եւ չորսին. յառաջնորդութեան քաղաքիս Մեսրոպ ճրգնագետաց վարդապետին. այլ եւ քաջ բարունապետին երկրորդ Վարդան վարդապետի եւ

հայրապետս իւր Արրահամ բանասիրին. որ նոքա եղին պատճառ անարժանիս Ի յուսումն ծաղկին... Յիշեցէք... Յովհաննէս գրիչս եւ Աստուած ողորմի ասացէք ճնորդաց իմոց տէր Սահակին եւ Աննային եւ որդոյն իմոց Սահակ պատանեկին... որ ծրեցի... եւ ծաղկօք վարդարեցի... Առաջին արուեստ ծաղկիս ամ է... Այլ եւ յիշեցէք Ի Քրիստոս զուսուցիչն իմ զՎանեցի Սահակ վարդապետն, որ ուսոյց ինձ զծաղկին եւ զարուեստ գրչութեան...» (Էջմիածնի, Թ. 317):

1683. Բարոզիբք մը «վերստին կազմեցաւ ձեռամբ Յովհաննէս անարժանի երկու ընդ Հինգխորան սուրբ եկեղեցոյ Ի վայելումն Վարդան աստուածարան վարդապետի Ի թվ. ՌՃԼԲ» (Պետերրուրգ, Արեւելեան ձեռնարան, Թ. 3, Յուլի. Ն. Մառի, Հանդ. Ամս., 1892, էջ 82ր):

1690. Յովհ. գրիչ Ի Բաղէշ կ'օրինակէ ձառոց գիրք մը եւ կը խնդրէ. «այլ եւ զՎարդան աստուածարան վարդապետն յիշեցէք Ի Քրիստոս, որ երեք զՍահակ վարդապետն Ի Վանայ Ի վանս իւր եւ հոգաբարձութեամբ ետ ուսուցանել անարժանիս զծաղիկ եւ զկազմ» (Գ. Տէր-Վարդապետեան, Տարօնի ձեռագիրներ):

հարապետին իւրոյ Արրահամ բանասիրին. որ նոքա եղին պատճառ անարժանիս Ի յուսումն ծաղկին... Յիշեցէք... Յովհաննէս գրիչս եւ Աստուած ողորմի ասացէք ճնորդաց իմոց տէր Սահակին եւ Աննային եւ որդոյն իմոց Սահակ պատանեկին... որ ծրեցի... եւ ծաղկօք վարդարեցի... Առաջին արուեստ ծաղկիս ամ է... Այլ եւ յիշեցէք Ի Քրիստոս զուսուցիչն իմ զՎանեցի Սահակ վարդապետն, որ ուսոյց ինձ զծաղիկին եւ զարուեստ գրչութեան...» (Էջմիածնի, Թ. 317):

1683. Բարոզիբք մը «վերստին կազմեցաւ ձեռամբ Յովհաննէս անարժանի երկու ընդ Հինգխորան սուրբ եկեղեցոյ Ի վայելումն Վարդան աստուածարան վարդապետի Ի թվ. ՌՃԼԲ» (Պետերրուրգ, Արեւելեան ձեռնարան, Թ. 3, Յուլի. Ն. Մառի, Հանդ. Ամս., 1892, էջ 82ր):

1690. Յովհ. գրիչ Ի Բաղէշ կ'օրինակէ ձառոց գիրք մը եւ կը խնդրէ. «այլ եւ զՎարդան աստուածարան վարդապետն յիշեցէք Ի Քրիստոս, որ երեք զՍահակ վարդապետն Ի Վանայ Ի վանս իւր եւ հոգաբարձութեամբ ետ ուսուցանել անարժանիս զծաղիկ եւ զկազմ» (Գ. Տէր-Վարդապետեան, Տարօնի ձեռագիրներ):

Իսկ Գրիգոր գրիչ, որ ինքզինքը «զպիլ» կը ներկայացնէ, 1680ին օրինակած է Աւետարան մը, զոր «զարդարեցի, կ'ըսէ, ծաղկով, գոյնզգոյն յօրինուածով եւ կազմեցի». եւ կը խնդրէ. «այլ եւ զաստուածարան վարդապետն Վարդան յիշեցէք Ի Քրիստոս, որ եղև պատճառ արուեստիս. զի բերեալ զՍահակ վարդապետն Ի Վանայ Ի վանս իւր եւ երկու տարի զմեզ առ ինքն ատեալ եւ ուսուցեալ. վանս որոյ Աստուած զինքն հաստատուն պահեսցէ Ի վերայ գաւազանին իւրոյ. թվին ՌՃԻԹ. կազմեցաւ» (Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 172):

Վարդան վարդապետ Ի Բաղէշ: Տարօնէն հալածական՝ շրջեցաւ Վարդան Ասորիքի մէջ ժամանակ մը, ուսկից ապա վերադարձաւ Բաղէշ ողջամբ: Տեսանք, որ ան 1673 զեկտեմբերի վերջերը այցելած էր Լիմի առաջատը: Որչափ ալ գրաւուած էին անոր ժամերը վարչական, անտեսական եւ շինարարական գործերով, բայց եւ այնպէս Ի բնէ գրասէր, աչքէ չէր հեռացներ Վանքին Մատենադարանը: Ոչ միայն ջանք տարաւ, որ Սահակ Վանեցին վանք բերէ եւ անոր նորոգել տայ Մատենադարանին վաստուած եւ

քայքայուած գրքերը, այլ եւ աշխատեցաւ ձեռագրել գրքերու թիւը նոր հատորներով, յատկապէս այնպիսի ձեռագիրներով, որոնք կը պահուէին հոն: Այս նպատակով ունէր ձեռք տակ քաջ գրագիրներ, եւ օրինակելու տար անոնց գործեր, որոնց բնագիրը վերհանած էր Տարօնի եւ Լիմի վանքերու մէջ եւ կամ վերահասու եղած էր անոնց գոյութեան օր եւ է վանքի կամ անձի քով: Պօղոս Գաւառցի կը հաւատէր մեզի, թէ Վարդապետը նաեւ հալածանքի օրերուն ետեւէ էր, որ իր գրիչները շարունակէին օրինակութիւնները անրնդհատ:

1671ին, երբ Վարդան Տարօն կը գլուխուէր, իր աշակերտը Պօղոս Գաւառցի, կ'օրինակէր Ի Բաղէշ Յովհ. Երզնկացոյ Մատթէի Մեկնութիւնը (Երուսաղէմ, Թ. 581):

1672ին նոյն Պօղոս կը գրէր Պատմագիրներու հաւաքածոյքը (Էջմիածնի, 2639) եւ 1674ին վանական վարդապետի Մեկնութիւնն Յորայ (Վեւեալի, ըստ Պոտուրեանի) եւ հաւանօրէն նոյն տարւոյն՝ Յակոբ Զոյնի ձեռքը (Տմմա. Չարբանապետն, Մատենադարան, էջ 45):

Վարդան Վանի մէջ (1675): Տարեգիր մը կը պատմէ թէ 1675ին Վան եկած է Սարգիս Վ. Չօլախ, արքայախոյզուս եւ առաջնորդ Կիպրոսի: «Սա սկսաւ քարոզել եւ խօսել հերձուած, զի ասէր. Ոչ է պարտ քրիստոնէից կանանց Ի ճնանել զողոյս պահել քառասունս. այլ այն Աստուածածնին միայն վայել էր պահել: Որոյ չար համբաւ տարածեցաւ եւ յու եղև ընդ ամենայն աշխարհ. եւ ժողովեցան բազում վարդապետք»: Ասոնց թուին մէջ էին

- Իսահակ Վ. Մակուցի,
- Սարգիս Վ. Կաֆայեցի, աշակերտն Իսահակ վարդապետի,
- Վարդան Վ. Բաղիշեցի,
- Մարտիրոս Վ. Գաղատացի,
- Յովսէփ Վ. Ղափանցի, առաջնորդ Վանի,
- Թուամայ Վ. Գանձակեցի,
- Վարդան Վ. Գաւառցի,
- Գրիգոր Վ. Բորիկ Անարժանի:

Ժողովականները կը զատապարտեն Չօլախ վարդապետի «անասելի» վարդապետութիւնը (Դիւան, Ժ., էջ 106):

Այս Սարգիս Վ. Չօլախ Կիպրոսցի, ինչպէս ժամանակը ցոյց կու տայ, Կիպրոսի Մա-

կարաց վանքին առաջնորդն էր, որուն մասին տես Նանդ. Ամս. 1949 (Մխիթար տոնադիրք), էջ 375, 378, 380 եւ 383:

Վարդան վարդապետ նուիրակ էջմիածնի ի Տարօն: 1676ին հրաման կ'ընդունի Յակոբ կաթողիկոսէն նուիրակութեամբ շրջիլ Տարօն: Այս մասին մեր տեղեկատունն է Պողոս զրիչ, որ 1676ին կը գրէ. «եւ է այժմ Վարդապետն յերկիրն Մշու ի սպասաւորութիւն Ս. Էջմիածնի, այս ինքն նուիրակ հրամանաւ տեսան Յակոբայ, թուին ՌՃԻՆ» (Էջմիածին, Թ. 1899. հմմտ. Սամուէլ Անեցի, էջ ԺԱ): Այս միջոցին հաւանարար կը ստանայ Վարդան Գրիգոր Աստուածարանի ձառերը, զոր նորոգել տարով 1677ին «եղ ի յիշատակ ի դռնն Ամբղոյս յընթերցումն հոգեւոր որդւոց Արրահամ վարդապետին եւ այլոց աշակերտացն» (Էջմիածին, Գէորգեան Բաժին, Թ. 124. հմմտ. Երեւակ, Գ., էջ 295):

Վարդան վարդապետ նուիրակ Երուսաղէմի ի նոր Ջուղայ: 1678ին կ'անուանուի Վարդան Երուսաղէմի Եղիազար Այնթապցի պատրիարքի կողմէ նուիրակ Պարսկաստանայոց այս մասին կը հաղորդէ մեզի Գրիգոր զպիր 1679ին, իր օրինակած Աւետարանին մէջ, «ի հայրապետութեան ամենայն Հայոց տեսան Յակոբայ եւ մերումս վերակացուի եւ առաջնի տեսան Վարդանայ քաջ հոգեւորի եւ բանիրուն վարդապետի, որ յայսմ ամի ի նըւիրակութիւն է գնացել ի Ծօշ քաղաք, որ է Ասպահան, վասն Երուսաղէմայ» (Երեւան, Պետ. Թանգ. Թ. 172): Վարդան յԱսպահան էր 1678, մայիս 25ին: Այս տեղ օրինակել տուած է քառամասնեայ ձեռագիր մը, որ ունի Յիշատակարաններս:

1. «Ձստացող սորա, այլ եւ յոյժ տաժանամբ սրբազրօղս զՎարդան վարդապետս Բաղիչեցի աղաչեմ յիշել ի սուրբ յազօթս հանդերձ ծնօղօք մերովք. թվ. ՌՃԻՆ»:

2. «Ձստացող զրոցս եւ զբազում երկօք յերեք եւ ի Գ. օրինակէ սրբազրօղս եւ գստութիւն եւ գսխարանս ամենեւին բարձօղ զՎարդան պիտակ վարդապետ Բաղիչեցի, որ եւ յոյժ աշխատեցայ, եւ գնեքսն սարկաւազն իմ, որ ընթերցաւ գօրինակն, յիշել աղաչեմ զիս եւ զծնօղսն իմ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ՝ զՎարդայ եւ զԵղիայ եւ զՍաղաթուր վարդապետ, եւ զաշակերտեալ մանկունսն զԱրրահամ վարդապետ եւ զայլսն ի վթուիթիւնն ֆրիստոսի եւ թողութիւն մեզաց. եւ զուք

յիշ(եալ լիջիք) ի Բրիստոսէ: Գրեցաւ ի Սպահան քաղաք ի Ջուղայ»:

3. «Յիշեցէք զմեղուցեալ Վարդանս սպասաւոր բանի, զստացող մատենիս եւ զծնօղսն իմ՝ զՎարդայն եւ զԵղիայ եւ զՍաղաթուր վարդապետն Բաղիչեցի եւ զաշակերտսն իմ զԱրրահամ վարդապետն եւ զուք Մարգարէ եւ զուք Գրիգոր կրօնաւորսն, որ աշխատութեամբ բազմաւ սրբազրեցաք զսա. ի թվին ՌՃԻՆ. ի Ծօշ քաղաք որ է Իսպահան եւ Աստուած գձեղ յիշէ եւ ողորմի»:

4. «Արդ գրեցաւ զիրքս այս ձեռամբ Մարտիրոս քահանայի ի խնդրոյ սրբամիտ եւ հեղահոգի եւ լի աստուածային շնորհուն Վարդան քաջ բարունապետի, որ ետ զսա զրիչ յիշատակ իւր եւ ծնօղացն եւ ամենայն արեանմերձաւորացն. ի թիւն ՌՃԻՆ. մայիսի ամսոյ ԻՆ» (Leiden, Համալսարանի Գրադարան, Or 5474. Հանդ. Ամս. 1937, էջ 343—351):

Վարդան ուխտաւոր Երուսաղէմի: 1684ին առած հետը 15 աշակերտ գնաց ուխտաւորութեամբ Երուսաղէմ: Այս փառաշուք ուղեւորութեան մասին զժրախտարար մէկ վկայ ունինք: Յանկալի էր ոչ միայն իր ուղեկից 15 (Դիւան, «ԺՆ» կարդացած է «ԺԵ») աշակերտներու անունները գիտնալ, այլ եւ ձանապարհին ուղեգիրը: Մեր տեղեկատունն է Յովհաննէս զրիչ, որ օրինակած է ձառնոց մը տանուէր պարոն Պողոսի համար: Կը գրէ. «Գրեցաւ ձառնոց զիրքս ի քաղաքն Բաղիչ, ընդ հովանեաւ .Ե. խորան սուրբ եկեղեցւոյ, Ս. Սաղիս, Ս. Աստուածածնին, Ս. Պաղոսի, Ս. Պետրոսի եւ Ս. Սարգսի զաւրաւարին ի թվին ՌՃԼԳ (1684) ի հայրապետութեան տեսան Եղիազարու, յիշխանութեան Ծարաֆ խանին, որ էր այր խաղաղարար եւ գտուրս սակաւացոյց...: Յիշեցէք զուսուցիչն իմ զԲաղիչեցի տէր Վարդան վարդապետն զմեծ հոգեւորն, որ յայսմ ամի գնաց յԵրուսաղէմ հնգետասան աշակերտօքն՝ մխիթարել զհոգեւոր եւ զմարմնաւոր եղբարսն որ անդ: Եւ կատարեալ գուխոն դարձեալ եկն, ի բնիկ արքուն իւր Ս. Յովհաննէս Մկրտչին, որ Ամիրզօլ վերածայնի: Այլ եւ զՎանեցի զՍահակ վարդապետն, որ ուսոյց ինձ զկապն, զծաղիկ: Ես զբողս Յովհաննէս քահանայ, ի Ջրօրհնեաց սկսեցի եւ աւարտեցի ի նոր Կիւրակէ... թվ. ՌՃԼԳ» (Գ. Տէր-Վարդապետեան, Ձեռագիրք ձեռագրչնի Ս. Կիրակոս եկեղեցւոյ. հմմտ. Դիւան, Ժ., էջ 12):

Վարդան վարդապետ եւ Երեմիա Չէլչպի Բէօմիւրճեան: Երեմիա Չէլչպի իր չափահան «Պատմութիւնն Ստամպուլոյ» նուիրած է Վարդան վարդապետի մը, ինչպէս գրուածքին ճակատին գրուած ընծայականէն կը տեսնուի. «Մեծարգոյ եւ քաջ բարունապետին տեսան Վարդանայ վարդապետի ընծայեալ յԵրեմիայէ Կոստանդուպոլսեցւոյ»:

Հեղինակը նոյնը կը կրկնէ նաեւ քիչ յետոյ.

«Ըստ սաստիկ խնդրոյն յիշատակ բարունոց Վարդանայ ընծայն. Ով տէր մեծ վարդապետ իմ ողջունիւ զքեզ մեծարանան. Առեց զքեզ ի հարաւոյ (Կ. Պոլսոյ) շրջեսցուք յերկիրս ի գրօսան (էջ 4): Դարձեալ գրուածքին վերջաւորութեան.

«Յիշատակարան ընծայիս երդողի»:

Յիշատակ տեսան Վարդանայ որ կոչի մեծ բարունի այն, Յղեմ զիմ աղվոր աղերսս զի շնորհաց Տեսան նա գոհարան... Տէր Վարդան՝ վարդապետդ մեծ՝ ընդ սուրբ աղօթսդ յիշել յարտամ Ձսակաւս ի շատ համարիս, զի յուր վարեաց դու արժան» (120|21):

Ան այս կը գրէ Դիւան. Վահրամ Թորգոմեան, որ հրատարակողն եւ ծանօթագրողն է Երեմիայի «Պատմութեան»:

«Վարդան վարդապետ Երեմիա Չէլչպիին շատ ծանօթ եւ անկէ շատ սիրուած ու յարուած անձնաւորութիւն մ'ըլլալու էր, որ մեծարգոյ եւ քաջ բարունապետ, մեծ վարդապետ, մեծ բարունի, տիտղոսներու կ'արժանանայ անոր զրչէն. եւ հարկաւ Կ. Պոլսոյ ալ եկած ըլլալու էր, եւ թերեւս ալ իրաւէ քաղաքին չորս կողմն այցելած Երեմիա Չէլչպիի հետ, եւ ուզած որ անոր նկարագրութիւնը պատրաստէ, ինչպէս արդէն այս զրուիսն Բ. տողին «Ըստ սաստիկ խնդրոյ յիշատակ, խօսքերը կը յայտնեն»:

Ո՞վ էր այդ «տէր մեծ վարդապետ» Վարդան եւ ե՞րբ եւ ի՞նչ առիթով ծանօթացած է Երեմիայի: Այս 1660—1689 տարիներուն, երբ կը գրէր Երեմիա իր «Պատմութիւնը»,

³ Այս ընծայականը կը տեսնուի նաեւ նոյն հեղինակի «Օսմանցւոց համառօտ պատմութեան» վերջը 1695 թուականով (հմմտ. Ակինեան, Երեմիա Չէլչպի, էջ 80):

հրատարակին վրայ մէկ Վարդան միայն կար, որ իրբեւ «մեծ վարդապետ» եւ «բարունապետ» տիտղոսի արժանացած է, այն է Վարդան Բաղիչեցի, առաջնորդն եւ ուսուցչապետը Ամիրտոլի վանքին: Իր անունը հռչակուեցաւ յատկապէս 1684ին, երբ 15 վարդապետ աշակերտներով Երուսաղէմ գնաց: Երեմիա իր Պատմութիւնը սկսած է գրել 1661—1664, 1673—1681—1689 տարիներուն ընդհատ ընդհատ, եւ հաւանօրէն պէսպէս խմբագրութեամբ: Այժմեան օրինակի սկիզբը գրուած ընծայականը եթէ նախնական խմբագրութեան մաս համարինք, անոր հանդիպումը Վարդանին 1660ին հարկ է ենթադրել, երբ Վարդան պարգապէս վարդապետ էր եւ տակուին չէր ընտրուած առաջնորդ: Այս պատճառով ալ 1933ին գրած էի. «Վարդան վարդապետ կ'երեւայ թէ Կ. Պոլսոյ եկած է 1660ին եւ այս առիթու առաջարկած է Երեմիայի գրել քաղաքին նկարագրութիւնը» (Երեմիա Չէլչպի, էջ 87): Պատմութիւնը սակայն չի յիշեր թէ Վարդան առ հասարակ Կ. Պոլսոյ գտնուած ըլլայ: Բայց կան կուսաններ, որոնք թոյլ կու տան ենթադրել անոր այցելութիւնը այս քաղաքը. 1672ին հալածանքի մէջ էր Վարդան. ան Տարօնէն իջած էր Միջագետք. հաւանօրէն անկէ անցած է Կ. Պոլսոյ արդարացնելու ինք զինքը Բարձրագոյն Դուռի առջեւ: 1673ին կազմած է ինքը Ամիրտոլի գրքերու Յուշակը. հոս կը յիշէ. «Քօմուրու տետրեր» (Արարատ, 1903, էջ 188), առանց անոնց բովանդակութիւնը մատնանշելու. բայց կրնանք ենթադրել թէ անոնցմէ մէկը Օսմանեան եւ միւսը Ստամպուլոյ պատմութիւնը եղած ըլլայ, որոնք Վարդանի նուիրուած էին (հմմտ. Երեմիա Չէլչպի Բէօմիւրճեան, Ստամպուլոյ պատմութիւն. հրատարակեց հանդերձ ծանօթագրութիւններով Դիւան. Վ. Յ. Թորգոմեան, Ա., վիեննա 1913, Բ., 1932 եւ Հ. Ն. Ակինեան, Երեմիա Չէլչպի Բէօմիւրճեան, Կեանքն եւ գրական գործունէութիւնը, վիեննա 1933, էջ 85—88):

Երեմիայի քով Վարդանի անուան կից «Տէր» տիտղոսը ցոյց կու տայ, թէ ան արքեպիսկոպոս է. օծումը 1670էն ետքը տեղի ունեցած ըլլալու է:

Վարդան վարդապետ ի Բաղիչ 1685—1704: Արդէն յառաջացած տարիքի մէջ էր Վարդապետը. ան մնաց այս թուականէն ի վեր Ամիրտոլի վանքը: Հետամուտ էր օրի-

նակել տալ իր «քարտուղարներու» նոր գրքեր: Կը յիշեմ.

1685. Վարդան քահանայ Բալուեցի կ'օրինակէր Մաշտոց մը «ի քաղաքն Բաղէշ, ի վանքն որ մականուամբ Ամբօլ վերածայնի, առ ոտս Վարդան քաջ հռետորի եւ արքայականոսի որ է լոյս աշխարհի» (ի Ձեռագիրս Տարօնի):

1687ին Գրիգոր գրեւ կ'օրինակէ Գր. Տաթևացոյ Գարոզգիրքը Յովհ. Վ. ի համար «ի մերումս վերադիտի տեսուն Վարդանայ» ի Բաղէշ (էջմիածին, Թ. 2078):

1693ին Բաղդասար սարկաւազ կ'օրինակէ Աւետարան մը «ի Բաղէշ քաղաքի ընդ հովանեաւ սուրբ Յովհաննէսին, առ ոտս Վարդան վարդապետին» (Ձեռ. Տարօնոյ):

1696ին կը գրէ Եղիազար վարդապետ. «Ես Եղիազար վարդապետս ի համար ամի գմերեան» (՞) Սուրբ Յովհաննու Եղբուտի վանաց, յայտ ամի. եւ առի զիշխանութիւնն վարդապետութեան ի վեհէն Վարդանայ վարդապետէ Բաղիշեցոյ. թվին ՌՃՆԵ» (Աւետարան, ի Ձեռագիրս Եղբուտի վանաց):

Արբահամ դպիր կ'օրինակէ Տաթևացոյ Լուծմունքն Մատթէի եւ Յովհաննու 1697ին ի վանս Ամիրգօլու յառաջնորդութեան ուխտիս «մեծ բարունապետիս եւ քաջ փաղեղայիս վարժապետիս մերոյ Վարդան վարդապետին» (Սեւան, Ն. Մառ, Յուլի, էջ 25):

Գրիգոր (Շղթայակիր) 1703ին կ'օրինակէր ի Բաղէշ յԱմբօլու վանս Տօնապատճառ մը, «ձեռնառ ժանդակութեամբ սուրբ ծերունի աստուածապատուեալ արհի եւ պանծալի քաջ բարունապետ Վարդան աստուածարան վարդապետի» (Հայաստան, 1852, Թ. 101):

Այսպէս թէեւ ալեւորած արդէն բայց դեռ ձեռնառ ժանդակ կ'ըլլայ Վարդան վարդապետ, իր երիտասարդ գրասէրներուն եւ գրագիրներուն, ընդօրինակութեամբ աճեցնելու եւ բազմացնելու գրքեր:

ՎԱՐԴԱՆ Վ. ԲԱՂԻՇԵՑԻՈՅ ՄԱՂԸ
Մեծ Վարդապետը «ծերունի» էր արդէն: Ունէր ան իր ետեւ աւելի քան 80 տարիներ: Բոլորած էր 50ամեակ մը վարդապետութեան, վարած էր 42 տարի Ամիրտոլի վանքին առաջնորդութիւնը: Հարուստ էին այդ տարիները արգասաւորութեամբ: Ծաղկած էին իր գաւազանէն ընտիր թիւ մը վարդապետ-

ներու եւ վարպետներու: Իր շինարարական գործունէութիւնը սրայծառացուցած էին Բաղէշի շուրջը, մինչեւ Տարօն, հայ եկեղեցիներն եւ վանքերը: Ամիրտոլի Համալսարանն եւ մեծարժէք Մատենադարանը հռչակ կը վայելէին իր օրով: Ունէր ան իր բարեգործութիւններով երախտագէտներու հոյլ մը ժողովուրդի ամէն խաւերէն: Օգտակար եղած էր իր նուիրակութիւններով էջմիածնի եւ Երուսաղէմի: Իբրեւ հռետորարան քարոզիչ իւր համարձակախօսութեամբ շահած էր իր շուրջ հիացող բարեկամներ եւ նախանձարեկ թշնամիներ: Էր խարաղազգեստ ճշմարտ եւ իր կենդանութեան իսկ համբաւուած էր բարեպաշտ հաւատացեալներու քով կենդանի «սուրբ»:

Այսպէս սիրուած իր ձեռնասուն ուշակերտներէն, յարգուած ողջամիտներէն եւ պաշտուած ժողովուրդէն կնքեց ծերունազարդ Մեծ Վարդապետը իր մահկանացուն: Վախճանեցաւ 1704 մարտ 31ին Ամիրտոլի վանքին մէջ եւ թաղուեցաւ նոյն վանքի Եկեղեցոյն մէջ ի շարս վանքին արդիւնաւոր առաջնորդներու:

Իր աշակերտներէն մէկը այսպէս հաղորդած է Մեծ Վարդապետին մահը.

«Ի թվին Հայոց ՌՃԾԳ (1704) ամին, որ էր նահանջ եւ տանուտէրն Կարիճ, ի մարտ ամսոյ Ա. օրն, յաւուր ուրբաթու Գառաւորդաց պահոց, որ լուսանայր ի շարաթուտօնի սրբոյ Լուսաւորչին, յառաջնում ժամու գիշերոյն, եղև վաղճան երանելի առն Աստուծոյ տեսուն Վարդանայ մեծի վարդապետին մերոյ եւ քաջ հռետորին Բաղիշեցոյ, մեծի փիլիսոփային, աշակերտի մեծ վարժապետին <Սաչատրոյ>. եւ թաղեցաւ ի տօնի սրբոյն Գրիգորի բազմաշարճար հայրապետի Հայոց, մեծաւ փառօք եւ բազմամբոխ ժողովրդօք, առաջի սրբոյն Յովաննու Մկրտչի սեղանոյն: Եւ սուգ մեծ եթող ազգիս Հայոց եւ աշակերտաց իւրոց: Որք հանդիպիք ամա՛ յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր գմեծ վարդապետն մեր եւ Աստուած գճեզ յիշէ. ամէն»:

= Leiden, Universitätsbibliothek, Or. 5494, f. 242a. Ձեռագրին նկարագրութիւնն եւ Յիշատակարանս տե՛ս F. Macler, Rapport d'une mission scientifique en Belgique etc., p. 83 եւ Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 349: Մեծ Վարդապետին յարգողները պատուած են անոր շիրիմը՝ գետեղելով վրան

տապանաքար մը հեռուեալ արձանագրութեամբ.

Ի ՏԱՊԱՆԻ ԱՍՏ ԱՄՓՈՓԻ ՄԱՐՄԻՆՆ ՄԱՔՈՒՐ ՄԵՍ ՀՈՒՅՏՈՐԻ. ՏԵԱՌՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՓԱՂԵՐԱՅԻ. ԱՐԻ ԵՒ ԳԱՋ ՎԱՐԺԱՊԵՏԻ, ԽԱՐԱԶՆԱԶԳԵԱՅ ՃԳՆԱՌՈՐԻ, ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ. ՈՐ Ի ՀՈՎՏԷՍ ՅԱՅՍ ՏՐՏՄԱԼԻ ԵՒ ԱՌ ՓՐԿԻՉՆ Ի ՅՈՅՍՆ ԲԱՐԻ Ի ԻԳ. ՅՈՒՅԵԼԷՆԻ, ԵՐՐԵԱԿ ԹՈՒՈՅՆ ՅԱՆԵԼԱԿՐԻ, ՈՐ ՀԱՆԳԻՊԻՒՒ ՏՈՒՒՔ ԶՈՂՈՐՄԻ:



Բաղիշեցի վարդան սուրբ վարդապետն է

Հրատարակուած՝ Սուրհանդակ (Կ. Պոլիս) 1904, Թ. 1763: Բիւզանդիոն, 1907, Թ. 3300 (Տ. եպ. Պալեան): Բարդէն Մ. Վ. Կիւլէսէրեան, Կոլոտ Յովհաննէս պատրիարք, Վիեննա 1904, էջ 201—202: Բիւզանդիոն (Կ. Պոլիս), 1909, Թ. 3916: Վահրամ Յ. Թորոզմեան, Ծանօթագրութիւնք Ստամբուլոյ պատմութեան Երեմիա Չէլէպիլի, Հանդէս Ամսօրեայ, 1910, էջ 316 = Արտատպ., Ա., 193: Գիւտ քահանայ Ազանեան, Դիւան Հայոց Պատմութեան, Ժ., էջ 82:

ՎԱՐԴԱՆԻ ՆՎԱՐԸ

Այս նկարը նկարել տուած է Վարդան Վ. Բաղիշեցոյ աշակերտը Գրիգոր Վ. Շիրուանցի, Շղթայակիր պատրիարքն Երուսաղէմի եւ կը պահէր իր Մատուռին մէջ յանմահ յիշատակ իր սիրելի ուսուցչին, զոր կը յարգէր որդիական գոյտրիկ զգածուններով:

Լուսանկարած է լուսանկարիչ Արամ Խաչատուրեան: Օրինակս նուիրած է ինձ բարեյիշատակ լուսնօգի Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան, նորընտիր պատրիարքն Երուսաղէմի Ս. Յակոբեանց, 1939 ղեկավարէրին, հրատարակելու թոյլտուութեամբ:

Վարդան վարդապետի ներքողը հիւսած է Գրիգոր Վ. Շղթայակիր իր Վիպասնութեան մէջ այսպէս.

«Վարդան արհին յոյժ պանծացեալ, Մաքուր վարուքն սրբաանեալ, Որ յԱմիրգօլ վանքն էր նստեալ, Ի Խողջ քաղաքէ կոչեցեալ. Եւ դարպասուն անդըր բացեալ, Բազում որդիս ի փառս ամեալ: Որբոց, տնանկաց էր խնամակալ, Եւ աղքատաց հայր նա դրտեալ. Եւ անձանձիր յերկս աշխատեալ, Ձեկեղեցիս յուրով շինեալ: Իսկ եւ վարուք յոյժ մաքրացեալ, Հողւով մարմնով արիացեալ. Ի պահս, յաղօթս էր նա ժուժկալ, Եւ ի մայրին խոշոր զգեցեալ: Յուսուցանելն աղբերանայր, Հողւով սրբով առատացեալ. Եւ քարոզէր նա անաչառ, Խրատէր գմարդիկ յօրէնսըն կալ⁴: Նաեւ մըտօք խորին դրտեալ, Չանյայտ գրանս ի լոյս ամեալ. Այլ եւ գրասէր այնչափ եղեալ, Չյուրով գրրեանս գրծազրրեալ: Եւ զարդարիչ տեղեացն օրհնեալ, Եկեղեցեացն աստուածընկալ, Բզվանորայս նա հաստատեալ, Ձինքն օրինակ բարեաց ցուցեալ: Վիշտըս բազումս յոքունց կրրեալ, Ըստ Պօղոսի ասիցն եղեալ, Թէ ի մերոց օտարացեալ, Թէ յարտաքնոց, որք զնա ատեալ: Այլ նա զընթացս իւր կատարեալ, Եւ ըզհաւատսն ամբողջ պահեալ,

⁴ Տպ. յօրէնս ընկալ:

Եղեւ առ Տէր վերափոխեալ,
Յանձառ հանգիստըն պատրաստեալ:
Ի թուին հաղար հարիւր անցեալ,
Յխուեն՝ և երեք այլ յաւելեալ.
Պետըն՝ վարժիչ յերկինս ելեալ,
Եւ զմեզ եթող որբ թափառեալ:

= Էջմիածին, Թ. 737 (Հին՝ 639), թղ. 181բ—182ա: Ասկէ հանելով հրատարակած է Ս. Տէր-Յակոբեան՝ Արարատ, 1903, էջ 176—177:

Մահուան տարին այսպէս զիտէ նաեւ Յարութիւնն Խալֆայեան. «Ի սոյն (ՌՃԾԳ) թուին Վարդան վարդապետն սուրբն Բաղիւշոյ վախճանի» (Դիւան, Ժ., 127): Իսկ Յովհաննէս Կորոտ մահուան տարին կը նշանակէ ՌՃԾԳ, եթէ «Դ» փոխ. «Գ»՝ տպագրական վրիպակ չէ. «Ի թուարեութեանս մերում ՌՃԾԳ ելլից տէր եւ ուսուցիչ հայրս մեր քաղցրաբարոզ եւ համեղարան՝ զիւրոյ պանդխտութեան ժամանակս» (Ձեներ Գլակ, Կ. Պոլիս 1719, էջ 47):

Հետաքրքրական է հետեւեալ Գովասանքը, որ աշուղական է, զոր գտած եմ Էջմիածնի Թ. 737 ձեռագրին մէջ: Բնագիրը համառոտագրութեամբ է տեղ տեղ: Մնացին տեղիքներ, որոնց ճշգրիտ ընթերցումը չյաջողեցաւ ինձ:

ԳՈՎԱՍԱՆՔ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԲԱՂԻՇԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՇԸՂՆԵՐԱՅ

Դու ես քրիստոնէից զպզին,
Երես սեւ է դամազին:
Գիշերն եմ տեսեր յերազին
Խորանն Վարդան վարդապետին.
Խորանն ամէն լաճվարդ էր,
Մէջն ամէն կին ու մարդ էր.
Գրէր Աւետարան եւ կարգայր Ղուրան,
Վարդան վարդապետին,
Անգին մարգարիտ կու թափի բերան
Վարդան վարդապետին:

Քո շուրջն եկած տեղիքն ո՞ւր է,
Քո խօսքերն Մարի թուր է.
Քեզ պահանջ չէնող խուլ է,
Մէկիկ Վարդան վարդապետին:
Ծառայ շնորհաց տվողին:
Քո երես տեսնող չի քաշեր դամ.
Քրիստոսի ձեռնէն խմեր ես ջամ.
Հասարթ է քեզ Ուրումն, Աջամ,

⁵ Տպ. Զպէտն:

Դիմաց Վարդան վարդապետին,
Ծառայ եմ քո արդար դատին:
Յառաջ քո սիրան կէք փափաք,
Եղար Քրիստոսի մշակ,
Քեւչ (°) կւին (°) Վարդան հրեշտակ,
Խեղճուկ Վարդան վարդապետին
Անգին մարգարիտ կու խօսի բերան,
Վարդան վարդապետին:

Ասացած խօսքին է՞ր էք նաչար,
Մէկ պատմութիւնն կէնէ հազար:
Քրիստոսի ձեռնէն բարգուզար⁶ եկար,
Վարդան վարդապետի:

Ծառայ եմ շնորհացդ վարդապետին:
Վարդանի քարոզն գաւառն է.
Աշխարհն ամէն իւր գուռն է.
Դունակի⁷ մանուկն իւր ծուռն է.
Դիմաց Վարդան վարդապետին
Ծառայ եմ ի տար դար⁸ դան:

= Էջմիածին, Թ. 737, թղ. 48բ (Ժողովածու):

ԱՌԱՋՆՈՐԿՆ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Վարդան կէս դարու շրջան մը գործեց ուսուցչութեան ասպարէզի վրայ: Անմիջապէս որ առաւ վարդապետական գաւազանը, անցաւ նստաւ ան ուսուցչութեան կաթեղնը, հաւաքեց իր շուրջը պատանիներ եւ սկսաւ դասախօսել: Այս մասին Պողոս Գաւառցի գրել է 1676ին կը յիշատակագրէր Թոմաս Մեծոփեցւոյ Պատմութեան վերջ կարեւոր տեղեկութիւններս.

«... Այլ եւ Վարդանայ մեծի հոկտորի Բաղիշեցւոյ վարդապետի (եղիցի յիշատակ), որ ետ զսա յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ աշակերտեալ մանկանց՝ Արրահամու վարդապետի Համթեցւոյ, որ է ընտիր կարդացող եւ խորին փիլիսոփայ, տեղեակ հնոց եւ նորոց կրօնարանաց, այլ եւ արտաքնոց եւ նրբից եւ քերականութեան տեղեակ. եւ տէր Մարգար եւ տէր Գրիգոր կուսակրօն արեւապից. եւ Ներսէս եպիսկոպոսի, որ է ընտիր, հեզահոգի. եւ երկու Սարգիս սարկաւազաց եւ երկու Ներսէս սարկաւազաց, եւ այլոցն ամենեցունց, որք են թուով Խ կարդացողք, վարդապետ եւ եպիսկոպոս, կուսակրօն արեղայ եւ Դ աշխարհի քահանայք.

⁶ րդար:
⁷ զունի:
⁸ դր:

այլ եւ տնտես մի եւ երկու սպասաւոր կանայք առաջի ձեռաց նորա, եւ երկու մշակ, որք լինին Խ յարան, Խ կարդացող եւ Ե տնտես եւ մշակ: Խնդրեմք ի բարերարէ Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ այսպիսի կարգաւորութեամբ պահեսցէ զսուրբ ուխտս Յովհաննու որ մականուամբ Ամիրգօլու Ս. Յովհաննէս ասի, վարդապետօք եւ եպիսկոպոսօք, քահանայիւք եւ սարկաւազօք եւ հաւատացեալ ժողովրդօք. ամէն: Գրեցաւ ի մերում թուականութեանս ՌՃ եւ ԻԵ. ամին, ձեռամբ տէր Պողոս Գաւառցոյ»:

Որպէս զի իր աշակերտները աւելի հրահանգուին գրչութեան, ծաղկարարութեան եւ կազմարարութեան արուեստներու մէջ, բերաւ 1673ին վանքը Վանեցի Սահակ վարդապետը. որ մնաց հոն ժամանակ մը եւ ունեցաւ յաջող աշակերտութիւն:

Մեկը չէ աւանդուած Ամիրտուլի Դպրոցին ուսմանց օրակարգն եւ առարկաները: Բայց կարելի է հետեւցնել մանր ակնարկութիւններէ, թէ այդ օրակարգին մէջ էին Երգեցողութիւնը, Գրչութիւնը, հայերէն լեզուի Քերականութիւնը, Աստուածաշունչ Մատենանին մեկնութիւնը, նուրբ գրքերու ուսուցումը եւ այլն: Աշակերտները դասախօսութիւններէն դուրս ունէին իրենց տրամադրութեան տակ ճոխ Մատենադարան մը, ուր կարող էին դիմել անդրաբոյն զարգացման համար: Դպրոցս թէեւ շուտաւ մեծ թուով մատենագիր հեղինակներ, բայց կը նկատուի այս շրջանին դրուած մանր գրութիւններէն եւ Յիշատակարաններէն, որ հայերէն լեզուի ուսուցման ուղարկութիւն դարձուած էր: Բաղէշի Դպրոցին աշակերտները եղած են նախնեաց գրական լեզուին հետեւողներ, գրած են պարզ, քերականական օրէնքներուն համաձայնող հայերէնով: Լատինարանութիւնը մուտ չէ գտած անոնց քով, թէեւ մատչելի եղած են իրենց «պատմայ» գրքեր, ինչպէս Թոմաս Կեմպպեցւոյ Համանութիւնն Քրիստոսի, զոր գտած էր Վարդան «քաղցր եւ անոյշ յոյժ, իրբեւ զնարեկացին յօգուտ ընթերցողաց» (Արարատ, 1903, էջ 184):

Բազմաթիւ եղած են Վարդանի աշակերտները, որոնք ստացած են իր ձեռքէն վարդապետական գաւազան (Յ 26): 1680ին, երբ Վարդան գաւազանի իշխանութիւնը պիտի տար Գրիգոր Բաղիշեցւոյ իբրեւ վկայ ներկայ

էին 11 վարդապետ աշակերտներ (տես Յ 24): Իսկ 1684ին, երբ Վարդան ուխտի գնաց Երուսաղէմ, իր շուրջն մէջ էին իր աշակերտներէն 15ը:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՆԱՐԱՐ

Տեսանք զինքը Տարօնի Առաքելոց վանքի մէջ, ուր կը նորոգէր Եկեղեցւոյն գմբէթը եւ շորս սաղերը. ի հիմանց կը շինէ Ս. Ստեփանոս եկեղեցին: Ան շինութիւններ կատարած է նաեւ ուրիշ վանքերու, զիւղերու եւ քաղաքներու մէջ, որոնց մասին ակնարկութիւններ ունի Պողոս Սասունցի, առանց մատնանշելու տեղերն եւ թուականները. անթուական է նաեւ անոր Յիշատակարանը. Պողոս կը գրէ Աւետարան մը. «Ի վերադիտողութեան սուրբ ուխտիս Յովհաննու, որ է Ամիրտուլու վանք ի Բաղէշ քաղաքի, տէր Վարդան քաջ եւ արի վարդապետի, որ յաւուրս եւ ի ժամանակիս յայսմիկ ոչ ոք է նման նմա. զի է անձանձիր ուսուցանող, շինող եւ հաստատող սրբոց եկեղեցեաց Հայաստանեայց. զի գրագում եկեղեցիս վերստին շինեալ կանգնեաց. եւ զոչ եղեալսն ի բազում տեղիս նորոգ հիմարկեաց եւ շինեալ աւարտեաց. եւ ելլից գնոսա քահանայիւք եւ սարկաւազօք, աւետարանաւ եւ արծաթի սկօք, շուրջաւով եւ մաշտոցով. եւ այլ բազում ուղղութիւնս արար, զոր ոչ կարեմ մի ըստ միջէ ի շար քարտիսիս արկանել. բայց զկատարեալ վարս նորա թողումք ամենագիտին Աստուծոյ, որ նա գիտակ է բարի գործոց նորա...: Յիշեցէք յաղթս ձեր զիս զՊողոս գծող սուրբ Աւետարանիս, որ եմ յերկրէն Բաղիշոյ, ի գաւառէն Նըշայ եւ Անձունից, ի Չորու Նախիայից, ի փոքրիկ գեղջէն Կորկանոյ» (Դիւան Հայոց Պատմութեան, Ժ., էջ 11—12):

Կատարած է շինութիւններ եւ նորոգութիւններ նաեւ Ամիրտուլի վանքին մէջ. Գրիգոր գրել է 1683ին օրինակած է Ամիրտուլի վանքին մէջ Ստ. Օրբելեանի Պատմութիւնն Միւնեացի ի վայելումս Վարդան Բաղիշեցւոյ. «որ բազում եկեղեցիս շինեաց եւ զԱմիրտուլու վանքս ի հիմանէ շինեաց տներով եւ հիցնեալով (°), եւ ետ գրել բազում գրեանս եւ եղ ի վանս, եւ բազմացուց միարանօք առաւել քան զՏաթեւու» (ձեռագիրը տեսած է Հ. Ն. Սարգիսեան ի Մուշ՝ ըստ Հ. Մ. Պատմութեանի): Վանքին տաճարի աւազ դրան ճա-

կատին արձանագրուած է յանձնուաց յիշա-
տակ՝

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՕՔ
Ս. ՀՈԳԻՈՅՆ ՇԻՆԵՑԱՒ ԳԵՂԵՑԿԱԶԱՐԴ ՏԱՃԱՐՍ
ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՎԵՐԱԿԱՑՈՒ-
ԹԵԱՄԲ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԵՒ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԲԱՂԱՔԻՍ ԵՒ ԹԱՂԻՍ ԺՈ-
ՂՈՎՐԴՈՅ Ի ԹԻԻՆ Ռ. Ճ. Խ. Դ. (1695). ԱՄԷՆ:

(Սուբհանդակ, 1904, Թ. 1763. Բիւ-
զանդիոն, 1907, Թ. 3300 և Հանդ. Ամս.
1910, էջ 316, ծան. 4):

Նոյնը կը հաստատէ նաև Սաչքարի մը
արձանագրութիւնը.

ՈՎ ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ ԽԱԶ ՓՐԿՉԻՆ ՆԵՐԿԵԱԼ
ԱՐԵԱՄԲ ԿԵՆԱՐԱՐԻՆ, ԲԱՐԵՆՕՍԵԱ ՅՕՐՆ ԱԶԱԳԻՆ
ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՄԵԾ ՏԵԼԷՏԻՆ. ՇԻՆՈՂ ՍՐԲՈՅ
ԱՅՍՍ ՏԱՃԱՐԻՆ ԹՎԻՆ ՌՃԵԻ:

(Բիւզանդիոն, անդ: Կիւլէսէրեան, Կո-
լտ, էջ 201:

ԳՐԱՍԵՐԸ

Քիչէր գտնուած են նախորդ շրջաններու
մէջ մատենասէրներ, որոնք նոյն եռանդով,
նոյնքան գուրգուրանքով վերաբերած ըլլան
դէպի գիրք, ինչպէս Վարդան Բաղիշեցի:
Սիրած է հաւաքել գրքեր, աշխատած է օրի-
նակել տալ մատենաներ, պահպանել նախ-
նեաց օրինակութիւնները, փաստածները
նորոգել, քայքայուածները կաղմել, անձամբ
կամ ի ձեռն վարպետ արհեստաւորներով:
Գրիգոր Շիրուանցի կը գրէր.

Այլ և գրասէր այնչափ եղեալ,
Ձյուլով գրեանս գրծաղբեալ:

Տեսանք վերագոյն, թէ ինչպէս վարձած էր
Սահակ Վանեցին կաղմելու և նորոգելու
Առաքելոց և Ամիրտոլու վանքերու ձեռա-
գիրները: Սահակ Առաքելոց վանքի մէջ նո-
րոգած և կաղմած էր 45 ձեռագիր: Իսկ
Ամիրտոլի Մատենադարանին համար նորո-
գածներու թիւն է 74:

Վարդան օրինակել և ծաղկել կու տար
նաև Եկեղեցական գրքեր, Աւետարաններ,
Մաշտոցներ, Ճաշոցներ, Շարականներ ևն,
որպէս զի նուիրէ գանոնք Եկեղեցիներու,
որոնք կը կարօտէին:

Ան մասնաւորապէս կ'օրինակէր և օրի-
նակել կու տար կարեւոր գրքեր, Ս. Հարց
գործեր, Մեկնութիւններ և նորը գրեանք
վանքին Մատենադարանին համար: Իր նպա-
տակն էր ընել Ամիրտոլու վանքը կենդանի
մը գրականութեան և մտաւոր լուսաւորու-

թեան: Հասած է մեզի իր Մատենադարանին
ձեռագիրը և տպագիրը գրքերու Յուլյակը,
կաղմուած իր իսկ ձեռքով:

ՊԱՏՄԱՍԵՐԸ

Չարմանալի նախասիրութեամբ հետա-
մուտ եղած է Վարդան հաւաքել իր Մատե-
նադարանին համար պատմական գրականու-
թիւնը. և յաջողած է գրեթէ լրիւ կաղմելու
չարքը հին պատմագիրներու, շնորհիւ իր
բաղմաշրջութեան և հետապնդումներու:
Ուր հասած է ան, անչափ գրասիրութեամբը
մղուած է քրքրել Եկեղեցիներու պահարան-
ները, վանքերու գրադարանները: Ինչ որ
հազուադէպ, հետաքրքրական և պատմա-
կան նիւթ գտած է, փութացած է օրինակել
տալ առանց ծախքէ վախնալու: Կը համա-
րիմ, թէ իր այս հետապնդումներու արդիւնքն
է Պատմագիրներու այն ցանկը, որ հասած է
մեզի ժԸ. դարէն (տես վարը):

Իր յանձնարարութեամբ օրինակած են
Պօղոս և Գրիգոր գրեցները 1672ին Երեւանի
Պետ. Մատենադարանի Թ. 2639 (նախկին
611 և 2463) ձեռագիրը, որ կը պարունակէ
իր ծոցը՝

- ա. Ագաթանգեղոս,
- բ. Թուղթ Դաշնաց,
- գ. Մեսրոպ երէցի Պատմութիւնն Ս.
Ներսէսի,
- դ. Մովսէս Սորենացի,
- ե. Եղիշէ,
- զ. Ղ. Փարպեցի, Պատմութիւնն և
Թուղթը,
- է. Սերբոս,
- ը. Կորիւն:

Վարդան իր Գրացուցակին մէջ նշանա-
կած է Չեռագրիւ ընդհանրապէս յայս-
պէս. «ԺԲ. Մէկ Մովսէս պատմագիր. որ կայ
ի մէջ. է. պատմագիրք. Ագաթանգեղոս,
Մովսէս. Եղիշէ, Ներսէսի Պատմութիւն, Ղա-
զարու Փարպեցու և Սորովու» (Արարատ,
1903, էջ 179): Չէ անգրագարձած Յուլյա-
կաղբը, թէ ձեռագրին մէջ Փարպեցու
Պատմութեան կից կայ նաև. Սերբոսի (կամ
Եւսերբոսի) Պատմութիւնն ի Հերակղ, վասն
զի այն անխորագիր էր. իսկ անոր յաջորդող
գրուածքը՝ «Յիշատակ սրբոյն Մեսրովպայ
արարեալ երանելոյն», այսպէս առանց ա-
նուան հեղինակին, որ Կարիւնն է, համարած

է գործ «Սորովու», այսինքն, ինչպէս
բացայայտ կ'ըսուի «Պատմագիրք Հայոց»
գրուածքին մէջ «Սորով ևս թարգմանիչ,
որ է Պատմութիւն սրբոյն Սահակայ հայրա-
պետին», մինչ Կորիւնի համար կ'ըսուի. «Կո-
րիւն թարգմանիչ, որ է Պատմութիւն սրբոյն
Մեսրոբայ վարդապետին», անշուշտ ուսած
Ղ. Փարպեցիէն: Սորովիկ թարգման յի-
շուած է Ղ. Փարպեցու Թուղթին մէջ. «Ահա
ո՞ր գայ միւս ևս թարգմանն» (էջ 202). որ
Հայաստանի սահմանին վրայ գտած էր իր
մահը: Իսկ «Սորովիկ թարգմանիչ» անուա-
նուած է Սորով քահանայ վարդապետը, որ
ծաղկած է Ը. դարու առաջին քառորդին:
Այլուր չենք գտներ յիշուած թէ «Սորով
թարգմանիչ» հեղինակած ըլլայ «Ս. Սահակի
պատմութիւնը». բայց Ղ. Փարպեցու Պատ-
մութեան սկիզբը գետեղուած յաւելուածա-
կան մասը, որ Ը. դարէն կ'երեւայ, կրնայ
Ս. Սահակի Պատմութիւն նկատուիլ. և այս
պարագային միայն Սորով(իկ) թարգմա-
նիչի վերագրուիլ այն:

Պօղոս գրիչ օրինակած է 1676ին Պետ.
Մատենադարանի Թ. 1899, որ կը բովան-
դակէ.

- Բ. Սամուէլ Անեցու ժամանակագրու-
թիւնը,
- Ժ. Կիրակոս Գանձակեցի,
- ժա. Թոմաս Մեծոփեցու Տարեգրութիւնը:

Գրիգոր գրիչ 1683ին օրինակած է ի Բա-
ղէշ Պետ. Մատ. Թ. 1896.

Ժբ. Ստեփանոս Օրբելեանի Պատմութիւնն
Սիւնեաց,

Յակոբ երէց 1689ին օրինակած է ի Բա-
ղէշ.

- ժգ. Սամուէլ Անեցու ժամանակագրու-
թիւնը,
- իբ. Մխիթար Այրիվանեցի,
- ժգ. Մատթէոս Ուրհայեցու Տարեգրու-
թիւնը,
- ժե. Յովհ. Դրասխանակերտցու Պատմու-
թիւնը,
- ժզ. Սիմէոն Ապարանեցու Վիպասանու-
թիւնը:

Վարդան ունէր Ամիրտոլի Մատենադա-
րանին մէջ հետեւեալ հատորն գրուած ԺԳ.
դարուն, որ կը պարունակէր.

ժէ. Ղեւոնդի Պատմութիւնը,
ժը. Վրաց պատմութիւնն. և Եւագրի
բանք:

Այս ձեռագրէն ապա օրինակ հանելով,
բնագիրը 1690ին նուիրած է Էջմիածին, որ
այժմ կը կրէ Երեւանի Պետ. Մատենադարանի
Թ. 1902: Վարդան թողուցած է հոն յիշա-
տակագրութիւնն. «Զստացող գրոցս որ կոչի
Ղեւոնդ պատմագիր և Վրաց պատմագիր և
Ս. Հօրն անապատաւորացն Եւագրի բանք և
խրատք բազում: Որ ևս Վարդան վարդա-
պետս Բաղիշեցի ստացայ ի հալալ արդեանց
խոց ևս ետու գիշատակ ի դուռն սուրբ Էջ-
միածնի ի փրկութիւն հոգւոյ իմոյ: Որք ըն-
թեանուք ևս օգտիք ի սուրբ գրոցս, յիշեցէք
ի Քրիստոս զԲաղիշեցի Վարդան վարդա-
պետն և զճնօղսն իւր. ամէն: Ի թվին ՌՃԼԹ»
(Ակիւնեան, Մատենադարանի Հետազոտու-
թիւններ, Գ., էջ 37):

ժք. Մմբատ, Տարեգրութիւն:

Վարդան Ամիրտոլի Մատենադարանի
գրքերու Յանկին մէջ կը յիշէ թէ կայ հոն
հատոր մը, որ կը բովանդակէ «Ստեփանոսի
Սիւնեաց կախիկոպոսի պատմագիրքն և
Ղեւոնդի պատմագիրքն և Վրաց պատմագիրք
և Մմբատ գիրք» (Արարատ, 1903, էջ 180):

- ի. Չենոր պատմագիրք,
- իա. Ստեփանոս Ասողկի,
- իբ. Մխիթար Այրիվանեցի,
- իգ. Օրպէլեանց պատմութիւն:

Նոյն ցանկին մէջ կը նշանակէ Վարդան
հատոր մ'ալ, որ ունի «Չենոր պատմագիրք,
ի հետն Ստեփանոսի Տարօնացոյն որ է
Ասողիկն, և միւս Ղեւոնդ պատմագիրք և
միւս Վրաց պատմութիւն և միւս այլ Մխի-
թարայ Այրիվանեցու պատմագիրք. և միւս
այլ Օրբէլեանց պատմութիւն» (անդ):

Այդ ցանկի մէջ կը յիշուին (էջ 179/80)
նաև.

- իդ. Թոմայի Արծրունու Պատմութիւն,
- իե. Վարդան պատմագիր,
- իզ. Անանիա Շիրակացի,
- իէ. Աղուանից պատմութիւն,
- իբ. Դաւիթ վարդապետի պատմագիրք,
- իբ. Եւսերբոս Կեսարացու Եկեղեցական
Պատմութիւն,

1. Սոկրատ,
 1ա. Յովսէպոս,
 1բ. Միքայէլ Ասորի,
 1գ. Պատմութիւն Աղեքսանդրի,
 1դ. Փռանկաց պատմութիւն:

Կղեմէս Գալանոս, Պատմ. բաժինը:
 Առաքել Դաւրիթեցւոյ Պատմութիւնն ունի սպառնալի:

Այս պատմագիրներէն մէկը քանին երկու եւ աւելի օրինակներով:

Ի վիճակի չենք մատնանշելու, թէ այս թիւ. — 1Գ պատմագրերը ուր եւ երբ գրուած են եւ այժմ ուր կը գտնուին:

Ամիրտողի Մատենադարանը կը բովանդակէր աւելի քան 200 հատորներ, զանազան բովանդակութեամբ:

Այս ցանկին պիտի անդրադառնամ յետոյ:

Այս պատմագիրներէն չորսը հասած են մեզի, որոնք ունին հետեւեալ յիշատակարանները, որոնք կարեւոր են, վասն զի ունին ակնարկութիւններ Վարդան վարդապետի մասին:

«Արդ եւ Վարդան վարդապետս Բաղիւնցիս ցանկացայ բարի աւուրցն որ միշտ արծարծէր չնորհք Հոգւոյն սրբոյ յարժանաւորս իւր. սիրոյ նոցին եւ աղօթիցն տենչացայ: Եւ ետու գրել զպատմութիւն սուրբ կաթողիկոսացն եւ թագաւորացն. զի աղօթիւք նոցա ողորմեցի Քրիստոս Աստուած մեզ եւ մերոցս ամենայնի. Տօրս իմոյ Եղիային եւ մօրս Ղարիպին. եւ եղբարցս Սաշատուրին եւ Սոշիապարին եւ գաւակաց նոցին: Եւ եւս առաւել հոգեւոր Տօրս իմոյ եւ ուսուցչի Սաշատուր մեծ իմաստուն եւ փելիսոփայ վարդապետի՝ Սաշատուր Բաղիւնցոյն. որ յայսմ ամի որ զգիրս ետու ծրել՝ Ժ. ամաւ յառաջ փոխեալ է առ Տէր: Եւ նորարողով հոգեւոր որդոցս իմ Արքայհամ վարդապետի Համթեցոյն, եւ Սարգիս փոքր պատանեկին. եւ միարան եղբարցն ամենեցուն որ կան ի սուրբ ուխտս Յովաննու Մկրտչի ի ծառայութիւն սուրբ խորանացս եւ ի սպասաւորութիւն մեզ, որ մականուամբ Ամրդօլու վանք ասի: Արդ աղաչեմ գձեզ, ով հարք մեր եւ եղբարք, որ ընթեռնուք եւ հոգեւոր քանս օգտիք ի սուրբ գրոցս, բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք ինձ Վարդան վարդապետիս եւ գծագրողի սորա հոգեւոր որդւոյ իմոյ տէր Պօղոս երիցու Գաւրոցոյ. եւ դուք յիշողք յիշեալ լինէք առաջի Քրիստոսի. ամէն:

Գրեցաւ ի Ռ եւ ի Ճ եւ ի ԻԱ թվին» (Թղ. 142ա, ի վերջ Դաշանց թղթին) (Արարատ, 1891, էջ 149):

2. «Քրիստոս Աստուած... ողորմեա ստացողի որդոցս Վարդան քաջ եւ սրբասէր վարդապետին եւ իւր ծնողաց... եւ հոգեւոր որդւոց իւրոց Արքայհամ վարդապետին եւ Սարգիս պատանեկին: Զի յոյժ սիրով եւ փափաքանօք ետ գրել զգիրքս զայս յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց...: Արդ... յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՎարդան քաջ եւ բարունի վարդապետն զԲաղիւնցին, որ իբրև վարեգակն փայլէ եւ յուսաւորէ զխաւարեալ եւ մեղսասէր մարդիկք ասելով եւ խրատելով եւ զամենեսեան զարձուցանէ ի չարեաց քաղցր բարբառովն եւ աստուածային քարոզութեամբն. զի միշտ եւ հանապազ ոչ դադարէ ի քարոզելոյ եւ յուսուցանելոյ: Քանզի գրագում ժամանակաց զխանգարեալ եւ վաւերեալ եկեղեցիսն նորոգեալ կանգնեաց, եւ ոչ եղեարան շինեաց ի հիմանէ. եւ այլ բազում բարեգործութիւնս արար ի վերայ երկրի, զոր ոչ կարեմ մի ըստ միովէ արկանել ի շարս քարախիսի. այլ բարեաց հատուցանողն որ տայ սիրողաց իւրոց զիւր անձառ բարիսն, տացէ նմա եւ զիւր երկնից արքայութիւնն ի միւսանգամ գալստեանն իւրում. եւ ի կեանս յայս ընդ երկայն աւուրս պահեցէ զնա ամէն: Ես Պօղոս երէցս զծօղ սորա աղաչեմ գձեզ, զի յիշման արժան անէք զիս» (Թղ. 111ա) (Արարատ, 1891, էջ 148—149):

3. «Արդ յերեսս անկեալ աղաչեմ գձեզ, ով սուրբ հարք... զի յիշման արժան անէք զխորին փելիսոփայն եւ զհոգիւնկալ վարդապետն զՎարդան Բաղիւնցին, որ յայսմ ամի ի հալածանս է յանիծեալ ազգէն Մահմետականաց յերկիրն Սուրացւոց որ այժմ Հալու վերածայնի: Որ յայսմ հալածանաց միջի ետ գրել զգիրս յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց: Եւ ես Պօղոս սուտ երէցս, որ եմ զծօղ տառիս, աղաչեմ գձեզ զի յիշման արժան անէք զիս» (Արարատ, 1891, էջ 150):

4. «Փառք... Աղաչեմ գձեզ զամենեսեան յիշելոյ եւ թողութիւն խնդրելոյ... արժանի անէք զՎարդան վարդապետն զԲաղիւնցին եւ զԾնողան իւր զԵղիէն եւ զՂարիպն... եւս առաւել զհոգեւոր հայրն նորա զՍաշատուր քաջ վարդապետն զԲաղիւնցին. եւ զԲարոնենց Յովաննէս վարդապետն որ նա եւս բազում աշխատութիւն ունի ի վերայ նորա ի

զրոց սերտցուլն. եւ զիւր աշակերտն զԱրքայհամ վարդապետն զՀամթեցին. եւ զիս դանարժանս զնորին անառակ որդին զՊօղոս... երէցս որ եմ զծօղ սորա, որ բազում երախտիք ունի ի վերայ իմ հոգեւոր եւ մարմնավոր...» (Թղ. 244բ, Արարատ, 1891, էջ 150):

5. «ԶՎարդան վարդապետն զԲաղիւնցին յիշեցէք ի Քրիստոս... որ ետ գրել զսա յիշատակ իւրն եւ եզ ի դուռն սուրբ Յովանիսայ» (Արարատ, 1891, էջ 148):

1676ին օրինակել տուած է Սամուէլ Անեցւոյ Հաւաքունն պատմութեանց, Կիրակոս Գանձակեցւոյ Պատմագիրքն եւ Թոմաս Մեծոփեցւոյ Տարեգրութիւնը մէկ հատորի մէջ, որ այժմ կը պահուի Էջմիածին, Թ. 1899. նկարագրուած Ա. Տէր-Միքէլեանէ՝ Սամուէլ Անեցի, էջ Ժ—ԺԱ: Յառաջ կը բերեմ կարեւոր յիշատակարանները:

«Ով վրամք հանդիսասիրաց եւ խումբք կոչեցեալ բարունապետաց, յորժամ պատահիք այսմ գրեանացս եւ քաղցրանայք ի բանս ճաշակացս, մաղթեմ ես ի ձէնձ յիշել անմոռաց յաղօթս ձեր սուրբ պարուպ Պօղոս Գաւառցի գրչակս:

Նաեւ զվարդապետն իմ վարդապետաց, Վարդան անուանեալ, պեա քարոզողաց, եւ զԱրքայհամ գլուխ աշակերտաց՝ Տիգրանակերտցի վարդապետ զովամ զի եւ ձեզ լիցի մասն պարգեւաց յանյաշաղ ձրից ի Տեառնէն կենաց»:

Երկրորդ եւ երրորդ Յիշատակարանները յառաջ բերինք վերը:

1689ին օրինակել տուած է Մատթէոս Ուրհայեցւոյ Տարեգրքը, Յովհ. Դրասխանակերտցւոյ Պատմութիւնն եւ Սիմէոն Ապարանեցւոյ Վիպասանութիւնը. պահուած այժմ Էջմիածին, Թ. 1896: Յիշատակարանն է.

«Արդ այսմ մատենագրի փափաքող եղեալ գերբըմանիկ եւ աստուածարեալ եւ մեծ բարունապետն տէր Վարդան Բաղիւնցի, որ յայսմ ժամանակի սա միայն երեւեալ աշխատող եւ հոգարարձու ծածկեալ եւ անյայտ պատմագրաց: Եւ սա բազում աշխատութեամբ եւ ջիւղմանոք սիրով ժողովեաց եւ ի լոյս էսած, զոմանս ի հեռատանէ բազմում ծախիւք բերելով. եւ զոմանս գրել տալով գրագրաց հմուտ եւ արագալիր գրչաց Եւզայն որ ոչ էր յայտնի շարագրով կարգեալ ի մի տիի, մեծաւ աշխատութեամբ հանեալ ի

զրոց յիշատակարանաց ինքն ժողովեալ հաւաքեաց զթիւս ժամուց եւ ժամանակաց զանյայտ եւ զխափանեալ թիւս եւ զպատմութիւնս, որ ի ծուլութենէ ուսումնասիրաց եւ յանհոգութենէ վարդապետաց խափանեալ էր...: Որ եւ զայս պատմագիրքս Մատթէոսի... ետ գրել... ի փրկութիւն հոգւոյ ծնողաց իւրոց՝ Տօրն Եղիային եւ մօրն Ղարիպին եւ եղբարցն Սաշատուրին փոխեցելոյն ի Քրիստոս եւ Սոշիապարին եւ որդւոյ նորին Ներսէս սարկաւազին... եւ հոգեւոր ուսուցչին իւրոյ Սաշատուր վարդապետին...: Գրեցաւ ի ձեռն Յակոբ երիցու) ... ի քաղաքն Բաղէշ, ի վանքն Ամրդօլու ընդ հովանեալ Ս. Յովհաննու Մկրտչին... ի թվականիս Հայոց ՌՃԼԸ, օգոստոս ի ԻՊ եղեւ աւարտ սորին, օրն Շաբաթ»:

ՎԱՐԳԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿՆԵՐԸ

Հայ գրականութեան համար վատտակաւոր էր Մեծն Վարդան զանազան զլուխներէ: Ան խնամոտ գուրգուրանքով հաւաքած էր մատենադարաններու մութ խորշերէն հայ պատմական գրականութիւնը եւ զայն բազմացնել տուած էր օրինակութեամբ: Ան նորովել եւ կազմել տուած էր Տարօնի Առաքելոց եւ Բաղէշի Ամիրտողի վանքերու իբր 100 ձեռագիրները: Ան հասցուցած էր գրչութեան արուեստի վարպետներ եւ ծաղկեցուցած հարուստ թուով գրագէտ վարդապետներ: Իր գրասէր ողւոյն ժառանգն եղած էր Յովհաննէս Բաղիւնցի Կոլոտ, որ ոչ միայն մեկնաստ հանդիսացած էր բազմաթիւ նոր թարգմանութիւններու արեւմտեան գրականութեան, այլ եւ աճեցուցած էր մեծ թուով աշակերտներ գրչութեան եւ ընտիր վարդապետներ:

Գրասէր եւ ուսումնասէր բարունապետը թէպէտ չուրիւրեցաւ գրական հեղինակութիւններու, բայց թողուց գրական մանր աշխատութիւններ, որոնք հետաքրքրական են իրենց սեռերու մէջ: Ասոնք են.

1. Ժամանակագրութիւն:

Անթիլիասի Կաթողիկոսարանի Մատենադարանի Թ. *** ժողովածոյքը կը պարունակէ հատուած մը «Վասն Պատմագրաց Հայոց», որ ժամանակագրական կարգով կուտայ հայ պատմագիրներու անունները Եւսեբիոսէն սկսեալ. եւ կ'աւարտի «Թոմաս. եւ

Առաքել. Վարդան յետին պատմագիրը: Այս Վարդանը Բաղրշեցին է. իր Ժամանակագրութեան կը հայնն Յակոբ երէցի հետեւեալ տողերը, որ 1689ին Ամիրտօլի վանքին մէջ օրինակելով Մատթէոս Ուռհայեցոյ, Յովհ. Դրասխանեցոյ պատմագիրքներն եւ Սիմէոն Ապարանեցոյ Վիպասանութիւնը, Յիշատակարանին մէջ կը գրէ, թէ Վարդան ոչ միայն աշխատող եւ հոգարարձու եղած է «ծածկեալ եւ աւելայտ» պատմագիրները հետախուզելու, այլ եւ «սա բազում աշխատութեամբ եւ ջերմեռանդ սիրով ժողովեաց եւ ի լոյս էած՝ զմանս ի հնոստանէ բազում ծախիւք բերելով եւ զմանս գրել տալով զբազարաց հմուտ եւ արագագիր գրչաց. եւ գայն որ ոչ էր յայտնի շարագրով կարգեալ ի մի տփի, մեծաւ աշխատութեամբ հանեալ ի գրոց յիշատակարանաց ինքն ժողովեալ հաւաքեաց գրիւ ժամուց եւ ժամանակաց գաւնայտ եւ զխփանեալ քիւս եւ գպատուութիւնս, որ ի ծուլութենէ ուսումնասիրաց եւ յանուարութենէ վարդապետաց խափանեալ էր»:

Ահնարկուած գրութեան մասին կը հարգէ Գիւտ Աղանեանց տողերս. «Այժմ իմ պահուած Միքայէլ Ասորու Պատմութեան վերջում նա (Վարդան Բաղրշեցի) գրած ունի պատմագրական մի ընդարձակ Յիշատակարան, որ քաղուածարար արտագրել է Փիրղալէմանը — ոչ ամբողջութեամբ: Այդ մասը, որ լոյս է տեսնում ներկայ հատորում, ընդգրկում է իր մէջ 1170—1654 Հայաստանի զանազան անցքերի պատմութիւնը համաօտիւ, իսկ վերջին տարուայ անցքերն աւելի մանրամասն, այն է Բաղէշի Աւղալ բէկ ամիրայի Վանի փաշայութեան ձեռքով անկումն ու... Հոտոմոց ազգից՝ Հայոց Ս. Յակովբ վանքի յախշտակելու պատմութիւնը» (Դիւան, Ժ., էջ 10—11):

Ժամանակագրութիւնը կը սկսի. «Քանզի Մահմէտի մարզ անօրէնութեան եւ որդին կորստեան եւ Կարապետ Նեոնի ի յԱրարիոյ ի Յաթրար քաղաքէ, որդի Արղւայի, ի ԿԼ. թուին Հայոց (619) տիրացաւ սակաւ աշխարհի, այլ եւ Շամայ եւս կալաւ զիշխանութիւն...»:

Կաւարտի 1657 տարւոյն երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին Յոյներէն գրաւուելու դէպքով: Ասոր կը կցէ Յիշատակարանս.

«Աղաչեմ յիշել ի Տէր Քրիստոս յոյսն իմ՝ զմեղուցեալ բանի սպասաւորս Վարդան եւ

զձնողսն իմ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, որ զգիրքս կազմեցի վերստին եւ զՅիշատակարանս եւ զսակաւ Պատմութիւնս արարի տկար մտօք, ոչ որպէս ձեզ վայել է, այլ ըստ իմում չափոյ. եւ զուք յիշեալիք ի Քրիստոսէ: Նաեւ զհամշիրակ եղբայրդ իմ զՏիգրանակերայի Սարգիս բարուհին ի հետ (տպ. յետ) յիշեցէք. ամէն (էջ 80—81):

Հրա. Դիւան Հայոց պատմութեան, Ժ., էջ 67—81 (Մեծն Վարդան Բաղրշեցի): Հմմտ. նաեւ Յ. Թօփճեան, Յուլիոս Գաղեան Խաչիկ վարդապետի ձեռագրաց, Բ., էջ 58:

2. Պատմագիրք Հայոց:

Այս վերնագրի տակ հասած են մեզի կրկին ցանկեր՝ Հայ պատմագիրներու եւ օտար ազգերու պատմագիրքերու հայերէն թարգմանութեան: Ե. դարէն մինչեւ ԺԸ. դարու առաջին տասնեակը: Կան այն տեղ ծանօթ եւ անծանօթ պատմագիրներ: Անծանօթները թէեւ ծանօթ են անունով, բայց չեն հասած մեզի անոնց պատմագիրքերը: Այս ցանկերը մինչեւ ԺԷ. դարու սկիզբը կարելի է նկատել ամբողջ: ԺԸ. դարու պատմագիրներէն յիշատակուած են միայն Առաքել Դաւրիթեցի եւ Զաքարիա սարկաւազ: Անծանօթ մնացած են Գրիգոր Դարանազցի, Սիմէոն Ապարանեցի, Վարդան Բաղրշեցի, Դաւիթ Բաղրշեցի, Սիմէոն Լեհացի, Ինչպէս նաեւ Սրապիոն Ուռհայեցոյ եւ Գրիգոր Կեսարացոյ պատմական գրուածքները, զորոնք կը յիշեն ժամանակակիցները, բայց մեզի հասած չեն անոնք: Այս չորս պատմական գործերը, զորոնք ունինք այսօր, պահուած են սկզբնագիրներով. ուստի չեն բազմացուած ընդհանուրին մատչելի ըլլալու համար:

Յանկերս ծանօթ են ինձի չորս օրինակներով (տե՛ս վարը), անոնցմէ հնագոյնն է էջմիածնի Թ. 2271, ներս առնուած 1724ին Մովսէս Զուղայեցոյ կազմած ժողովածոյքին մէջ: Յիշեալ օրինակներէն չորրորդն է Յակոբ Այուբեանի հրատարակութիւնը Մագրասի Աղգարար անդրանիկ պարբերագրին մէջ 1795ին: Այս տեղ ձոխացած են Յանկերս նոր յաւելուածներով. ներս առնուած են պատմագիրքեր, որոնք յօրինուած կամ թարգմանուած են ԺԸ. դարու երկրորդ կեսին. կը յիշուի նաեւ «Մարգարէ Ծահրիմանցոյ» թարգմանած «Պատմութիւնն Սի-

նէացոց» 1793էն: Ինչպէս Այուբեան ջանք տարած է արդիականացնել Յանկերս, նոյնպէս կրնանք մտածել, թէ նաեւ Մովսէս Զուղայեցի յաւելուածներ մուծած ըլլայ իր օրինակին մէջ, յատկապէս իրմէ յաւելուած ըլլան «Զաքէոս պատմագիրք... մինչեւ ՌՃԾ թուին» եւ «Պատմագիրք սուրբ Ժողովոյն Եփեսոսի եւ Քաղկեդոնի... ի ժամանակս թուականութեան Հայոց ՌՃԿ»:

Դուրս հանելով այս երկու յաւելուածները Յանկերուս յօրինուած կրնանք ենթադրել ժէ. դարու 70ական թուականին. կանխազոյն եզր առնելով 1669, այն է Առաքել Դաւրիթեցոյ Պատմութեան տպագրութիւնը: Հեղինակին ծանօթ է նաեւ Յովսէպոսի Պատմութեան թարգմանութիւնը ի ձեռն Ստեփանոս Լեհացոյ 1660ին:

Ո՞վ կարող է ըլլալ Յանկերուս հեղինակը այս ժէ. դարուն: Միակ անձ մը կը ցցուի այս շրջանին մեր առջեւ, որ բոլոր թափով հետամուտ է պատմական գրականութեան, որ ոչ աշխատանք եւ ոչ դրամ կը խնայէ կազմելու լիակատար հաւաքածոյք մը հայ եւ օտար պատմագիրքերու եւ զանոնք օրինակութեամբ մատչելի ընելու ընդհանուրին: Այդ Վարդան Վ. Բաղրշեցին է: Հեղինակը իր Յանկերը չէ կազմած ի լոյս կամ նախնեաց հաղորդած գրական յիշատակարաններէ քաղելով, այլ զանոնք, — գոնէ մեծազոյն մասը — անձամբ կարդացած ցոյց կու տայ ինքզինքը: Ան գիտէ պատմագիրներու անունները, ժամանակը, պատմագիրքերու բովանդակութիւնը եւ նկատի առնուած ժամանակամիջոցը: Այդ պատմագիրքերը հազուադիւրս էին մինչեւ ԺԷ. դար. անոնց ոչ անունները ծանօթ եւ ոչ պահուած տեղերը յայտնի: Առաջին անգամ Ամիրտօլի վանքին առաջնորդի ջանքերով անոնք հաւաքուեցան վանքին Մատենադարանին մէջ եւ դարձան հետաքրքրուողներու մատչելի: Ուստի այդ վանքին միտքան մը միայն ի վիճակի էր կազմել նման Յանկ մը: Որովհետեւ այդ վանքին մէջ միայն Վարդան Բաղրշեցին էր, որ կը հետաքրքրուէր պատմական գրականութեամբ, հարկ է իր գրչէն համարել այս կրկին Յանկերը: Ինքն էր, որ խորհած էր կազմել նաեւ Մատենադարանին գրացանկը, որոչ դասաւորութեամբ, զանազանութեամբ անոնց սեռերու եւ այլն: Եթէ այն տեղ մատնանշած է պատմագիրքերու համարները, այս տեղ իր նպատակը եղած է տալ հայ պատմական գրա-

կանութեան պատկերը. ի՞նչ հեղինակած են նախնիք եւ ի՞նչ բերած հասցուցած է ժամանակը:

Թէ ինչո՞ւ համար անյիշատակ թողուցած է հեղինակը իր իսկ ժամանակագրութիւնն եւ Դաւիթ Բաղրշեցոյ Ծաղկաքաղ Պատմութիւնը, պատճառը կամ համեստութիւնն պէտք է համարել եւ կամ զգուշութիւնը: Երկու գրուածքներու ալ սկզբնագիրները զետեղուած են իմ անապատի Մատենադարանին մէջ ի պահպանութիւն: Կարեւոր չէ համարած Վարդան այդ գործերու օրինակները բազմացնել տալ: Երկու լուսամիտ հեղինակներն ունէին մուծ նախանձորներ. որոնց առջեւ պէտք էր զուշանալ:

Յուլիոսներէս ծանօթ են ինձ երեք ձեռագիր եւ մէկ տպագիր. ասոնք են. էջմիածին Թ. 2271, թղ. 218—220ր (1724էն). 2220, էջ 578 (1790էն) եւ Անթիլիասի Թ. ***, թղ. 95ա—96ա (ԺԸ. կամ ԺԹ. դարէն): Եղած է չորրորդ օրինակ մ'ալ Յակոբ Այուբեանի ձեռքը, որուն համեմատ հրատարակած է գայն Աղգարար (Մագրաս 1795), էջ 188—192. ասկէ արտատպուած՝ Հ. Գ. Գալէմքեարեան, Պատմութիւն Հայ լրագրութեան, Վիեննա 1893, էջ 205—210: Ինչպէս կ'երևայ Սյուրեան ոչ միայն յաւելուածներ մուծած է բնագրին մէջ, այլ եւ կատարած է տեղ տեղ յազուաժամեր: Հինգերորդ օրինակ մ'ալ կը յիշէ Ստեփանոս քահանայ Տէր-Յոհաննանց 1839ին. որ իր նամակին մէջ 29 փետր. առ Գեր. Արբաշայրն Միտիթարեան Ուխտին ի Ս. Ղազար «ճանուցանէ, թէ յերթաւն յԱպահան գտեալ է ուրեք Յուլիոսի մի գրչագիր մատենից, զոր կարծէ լինել Ամենափրկիչ վանաց Նոր-Ջուղայու. եւ զանուանս մատենիցն կարգէ ի նամակին, յորս նշանակեալ է եւ Գործք Աթանասի, եւ այլ ոչ սակաւ գրչագիրք սակաւագիւտք եւ ցանկալիք, որպիսիք են՝ հոստրովայ քարգլանի Պատմութիւն Ս. Սահակայ. Կորիւն Պատմութիւն Ս. Մեսրոպայ. Ծապուհ պատմագիր, որ է Որմըլ-գաթրապայ [կարգա՝ պատմութիւն սրբոյն Սմբատայ] ստրատելատին եւ այլոց սուրբ ցահատակաց որ ի թուին ԳձԲ...» (Ս. Աթանասի... ձառք եւ թուղթք, Վենետիկ 1899, էջ 2—է): Ընդգծուած տեղիքները ա՛յս Յանկէս հանուած են, ուստի տեղեկատուս սխալած է, երբ համարած է, թէ այդ Յանկը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքին ձեռագրաց Յուլիոսը եղած ըլլայ: Որով մոլորացուցած է

նաև ուրիշները. այսպէս Հ. Գ. Չարբանաշեանը, որ գրած է Երկիրս իր Հայկական հին դարձեթեան պատմութեան մէջ «Ի Նոր Զուգա պահուած ձեռագրած թուին մէջ կը յիշուի դիրք մը» (էջ 295), «Նոր Զուգայի Ամենափրկիչ վանաց ձեռագրաց Յուցակի մը մէջ ալ կը գտնենք ի թիւս այլոց...» (էջ 504) եւ այլն: Հեղինակին ծանօթ էր նաև «Նորագոյն յիշատակագիր մը պատմչաց դասակարգութեան» (էջ 465, 504 եւ 571), որ ոչ այլ ոք է, եթէ ոչ Յակոբ Այուբեան, ուստի կարող էր անդրադառնալ, թէ Տէր-Յոհաննանցի «Յուցակին» նոյն է այդ Յիշատակագրի պատմչաց դասակարգութեան հետ:

Կարևոր կը տեսնեմ այս «Պատմագիրքը» միւսանգամ հրատարակել էջմիածնի թ. 2271 ընդերք ընտրելով: Բնագրին ստորեւ կը նշանակեմ Անթիլիասի ու Այուբեանի օրինակներուն տարբերակները:

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

(Ա.)

Ա. Պատմութիւնք սրբոց Առաքելոցն, որք է Հայո կատարեցան. որպէս վկայէ Մովսէս Խորենացին. Բ. Հատոր, ԼԱ. դրուի:

Բ. Ագաթանգեղոս. Պատմութիւն չարչարանաց եւ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին:

Բայց (ի թղթոյ) Դաշանցն սիրոյ եւ միաբանութեան զգոյշ պարտի լինել. զի ի հին օրինակն ոչ ուրեք գտանի, այլ ի նորագոյնն. Անթիլիասից բազում ինչ ըստ իւրեանց ախորժակացն չարադրեալ խորամանկութեամբ՝ երևի:

Գ. Մեսրոպը երէց. որ է Պատմութիւն սրբոյն Ներսիսի մեծի հայրապետին:

Դ. Մովսէս Խորենացի. Հաւաստագատում պատմագիրք, չորս հատոր. սկսեալ Աղամայ մինչեւ ի Զենոն կայսրն, որպէս

- A = էջմիածնի թ. 2271:
- B = Անթիլիաս:
- C = Աղղարար 1795:
- ԽՈՐԵՆԱԳԻՐՔ C նախապէս պատմութիւնք:
- Ասացին հատուածք չունի C:
- Վկայէ չունի B:
- Բ. C Արաթանգեղոսի զոր վասն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին հօրն մերոյ, եւ Տրդատայ թագաւորին, ի ժամանակն նոցա եղեալս պատմէ:
- Բ. B այլ զարգարեալ երեւի ի անթիլիասից զոր խորամանկեալ են:
- Գ. C Մեսրոպը էրէցն պատմէ վասն սրբոյն: ABC էրէց: BC չունին մեծի:
- Դ. BC չունին Հաւաստագատում պատմագիրք:

վկայէ Թոմաս Արծրունեաց պատմագիրք. բայց այժմս զերիս հատորն միայն տեսանեմք իսկ չորրորդն ոչ ուրեք գտանի ի սաղարկոյ հերձուածողաց:

Ե. Կորիւն թարգմանիչ. որ է Պատմութիւն սրբոյն Մեսրոպ վարդապետին:

Զ. Խոսրով՝ եւս թարգմանիչ. որ է Պատմութիւն սրբոյն Սահակայ հայրապետին:

է. Եղիշէ վարդապետ. որ է Պատմութիւն նահատակութեան սրբոյն Ղեւոնդեանցն եւ վարդանեանցն: Թէպէտ եւ զպատերազմունսն սրբոյն վարդանայ որ նախ քան զնահատակիլն ըստ պատմագրաց՝ այժմ ոչ գտանի ուրեք, զոր արարեալ է եւս սրբոյն Եղիշէի:

Ը. Ղազար փարպեցի ճարտասան. Պատմագիրք սկիզբն արարեալ ի մահուանէ սրբոյն Սահակայ մինչեւ ի մահն Զենոնի կայսեր:

Թ. Բիւզանդ. որ զեղեալ իրս պատմէ Հայոց աշխարհիս իրր զմնացորդս նախկին պատմագրաց. հատորս վեց:

Ճ. Զենոն պատմագիրք, որ է Պատմութիւնք Տարօնայ սուրբ Կարապետին եւ յաղթութիւնք իշխանացն Տարօնայ որ առ Խոսրով Պարսից արքայիւ:

ՃԱ. Հերակլ յԵւսեփոսէ Եպիսկոպոսէ սասցեալ, որ ինչ սակս պատերազմացն Հերակլի եւ Խոսրովու եւ այլ բանք պիտանիք:

ՃԲ. Անանիա Շիրակացի. սկիզբն արարեալ յԱղամայ համառօտ դաւազանաւ էջմիածնէ մինչեւ ի ժամանակն Անաստասոյ կաթողիկոսի:

ՃԳ. Ղեւոնդ պտմագիրք. որ է Պատմութիւն անօրէն ազգին չարի:

ՃԴ. Շապուհ պատմագիրք. որ է Պատմութիւն սրբոյն Սմբատայ սարաւելատին եւ այլոց սրբոց նահատակացն որ ի թուին ԳձԲ (853):

BC չունին սկսեալ: AC մինչեւ Զ. B մինչ ի: C կայսր: BC Թոմաս: A այժմս: A երեւի BC տեսանեմք: A զչորրորդն: B չորրորդն: C չունի իսկ — հերձուածողաց:

Զ. C չունի եւս: Է. B կը համառօտէ թէպէտ — Եղիշէի այսպէս. բայց պատերազմի զերն վարդանայն որ նախ քան զնահատակիլն այժմ ոչ երեւի. այն Եղիշէի է արարեալ: իսկ C դուրս գաւ է:

Ը. ABC պարպեցի. A ու. առեալ. BC չունին: BC մինչ ի. C չունի մահն:

Ճ. C պատմութիւն: ՃԱ. B յԵւսեփոսէ: BC չունին որ ինչ:

ՃԲ. AC կաթողիկոսին:

ՃԳ. B ազգի:

ՃԴ. C չարուհ: BC Ծ. պատմութիւն որ է զերք սրբոյն: C ու. թուին Հայոց: A թուին:

ՃԵ. Յովհաննէս կաթողիկոս, ազգական սրբոյն Մաշտոցի. սկսեալ յԱղամայ մինչ ի թիւն ԳձԿԲ (912), ի կատարունս Սմբատայ թագաւորին:

ՃԶ. Մովսէս Կաղանկատուեցի. որ է երեք հատոր, Աղուանից պատմութիւնք:

ՃԷ. Ուխտանէս. որ է Պատմութիւն բաժանման վրաց ի Հայոց:

ՃԸ. Թումաս պատմագիրք. որ է երկու հատոր, Պատմութիւն Արծրունեաց սկսեալ ի Նոյէ մինչեւ ի կաթողիկոսութիւն Աղթամարայ:

ՃԹ. Ստեփանոս Տարօնցի. որ եւ կոչի Ասողիկ. երեք հատոր. սկսեալ յԱրարահամէ մինչեւ ի մահն սրբոյն Գրիգորի Նարեկացոյն՝ ի ՌձԾԲ (1003) թիւն:

Ի. Արիստակէս Լասարավարդացի. սկսեալ ի ԴձԾԲ (1003) թուէն մինչ ի ԵձԼ (1181) թիւն, ողբերգական դիմօք:

ԻԱ. Յոհան Կոզեռն. արար պատմագիրք որ ինչ ի ժամանակս իւր:

ԻԲ. Յոհան Տարօնացի. որ է Պատմութիւն Բագրատունեաց:

ԻԳ. Սարկաւազ վարդապետն սուրբն Յովհաննէս. արար եկեղեցական պատմագիրք:

ԻԴ. Մաթէոս Ուռնայեցի. Պատմութիւն աւերման աշխարհիս Հայոց, սկսեալ ի ԴձԶ (957) թուէն մինչեւ ի Զձ (1151) թուականն:

ԻԵ. Սամուէլ երէց. որ արար գՔննիկոն դաւազանագիրքն:

ԻԶ. Միսիթար Անեցի. որ է Պատմութիւն Անեոյ քաղաքին եւ այլ ինչ բանից պիտանեաց:

ԻԷ. Ներսէս Շնորհալի. որք վիպասանական ի նախնին իւր. եւ սակս Առմանն Ուրհայոց եւ Երուսաղէմի:

ՃԵ. AB յոհաննէս: A թուին B թիւն. մինչեւ ի թիւն ԳձԿ:

ՃԶ. AB կօզան կոտուեցի C կօզան կ.:

ՃԷ. վ. եւ հ.:

ՃԸ. ABC Թոմաս:

ՃԹ. AB ստեփաննոս A տրօնեցի BC տարնեցի: BC թուականին

Ի. BC լասարավարդեցի իմացիլ լասարիկերացի: A թուին. B թիւն:

ԻԱ. C ու. ի ժամանակս իւր զոր ինչ կղեւ:

ԻԲ. A տարնացի:

ԻԳ. A ԴձԶ BC ԴձԼ բայց Ուռնայեցոյ պատմութիւնը կը սկսի Ն. բուականիս եւ կ'աւարտի ՈժԱ տարւոյն:

ԻԴ. B սամուէլ: ABC էրէց: BC զքնիկոն:

ԻԵ. AB յոնեցի... յանեոյ: C բանք պիտանիք:

ԻԶ. C չորհայրոցն որք վիպասանական վասն նախնացն եւ վասն...: B ի լուսանցս մտաղեալ զներսէս լամբրօնացոյն գործք:

ԻԸ. Վահրամ որդի Տիգրանայ¹. եւս որք զինի բանից սրբոյն Ներսէսի ի նոյն ոճս արարեալ՝ սակս Տանն Ռուբենեանց:

ԻԹ. Սմբատ պատմագիրքն. եւս թագաւորութեան Ռուբենեանց:

Լ. Միսիթար Գոշն. արար պատմութիւնս պիտանիս որ ինչ սակս հերձուածողաց²:

ԼԱ. Յովհաննէս³ Վանական. որ ինչ ի ժամանակս իւր սակս Թաթարացն:

ԼԲ. Կիրակոս պատմագիրք. եւս վասն ազգին Թաթարաց եւ այլ պիտանի բանից:

ԼԳ. Գրիգոր պատմագիրք. եւս վասն Թաթարաց մինչեւ ի ժամանակս Կոստանդնի մեծի կաթողիկոսին:

ԼԴ. Վարդան վարդապետ. սկսեալ յԱղամայ մինչեւ ի ԷձԺԵ (1266) թիւն:

ԼԵ. Ստեփանոս Սիւնեցի. որ է Պատմութիւն Սիւնեաց եւ կոչի Տաթեու կոնդակ:

ԼԶ. Միսիթար Այրիվանցի. համառօտ դաւազանաւ մինչեւ ի ԷձԿ (1311) թիւն:

ԼԷ. Թումաս Մեծոփեցի. աշակերտ սրբոյն Գրիգորի Տաթեուցոյն. երկու հատոր պատմութիւն. մին վասն Թամուր Կաղին եւ շարեացն նորին. եւ միւսն վասն նորոգութեանն կաթողիկոսութեանն սուրբ էջմիածնին:

ԼԸ. Առաքել Դավրէթեցի. Պատմութիւն թագաւորացն Պարսից եւ զերութեան Հայոց եւ վարք կաթողիկոսացն որ ի նոյն ժամանակի, մինչ ի թիւն ՌձԹ (1660):

- ԻԸ. C վահրամայ որդոյ Տ. եւ որք զինի...:
- ԻԹ. C եւս վասն Թագաւորութեանն:
- Լ. C պատմութիւնս պիտանի սակս հ.:
- ԼԱ. C իւրոյ եղեալ էր սակս:
- ԼԲ. C եւս այլոց պիտանեաց ը.:
- ԼԳ. C չունի ազգին:
- ԼԴ. B էձԺԷ թիւն: C չունի ի. A թուին:
- ԼԵ. AB ստեփաննոս. C չունի Սիւնեաց: A կոստակ:
- ԼԶ. ABC թուին:
- ԼԷ. A Թոմաս B մեծօփեցի: AB չարաց C չարախողաց:
- ԼԸ. C չունի թագաւորացն եւ որ ի սոյն — ՌձԹ:

¹ Հեղինակը նոյնացում է իւր 1030ին ծաղկած «Վահրամ որդի Տիգրանայ» պատմագիրք (Վարդան պատմիչ, էջ 94. իսկ Միսիթար Այրիվանցի, էջ 37. «Վ. Տիգրանակերացի») համանուն Վ. Բարունոյ հետ, Գանեղոյ դարոցէն, վախճանած 1293էն ոչ շատ վերջը: ² Կաղանկատուէ հաւանօրէն Միսիթար Գոշնի թուղթն առ կաթողիկոսն վրաց. հրատարակուած Ազարատ 1900, էջ 497, 562. 1901, էջ 121: ³ Վերագոյն § 2, Գ., ծան. 4 ուղղութիւնը ըրած էի, որ Վանական վարդապետ առաջին անգամ Յովհաննէս անուանուած է վարդան Բաղիշեցոյ տուած Վկայազերին մէջ: Նոյնը կը տեսնենք նաև հոս, նոյն գրչէն: Վանականի այս Պատմութիւնը յիշած են Վարդան եւ Կիրակոս, ոսկից օգտուած է Հեղինակս:

(ԼԹ.) Զաֆէոս պատմագիրք. երկու հատոր, սկսեալ զհին բանից Առաքելին մինչ ի ՌՃԾ (1701) թիւն:

(Բ.)

Այլ եւս գոն պատմագիրք թարգմանեալք որք են այսոքիկ:

Ա. Յովսէփոս. ի Յունաց լեզուէ թարգմանեալ եղև. որոյ Պատմութիւնն սկսանի զհին բանիցն Մակարայեցոցն մինչև ի յԽԲ. ամն Բրիտանի, վասն կործանման Հրէից եւ քաղման տաճարին: Գիրքս այս նախ թարգմանեալ եղև ի սրբոց թարգմանչացն. եւ ի անյայտ լինելն՝ վերստին թարգմանեալ եղև ի Լատինացոց լեզուէ ի ձեռն Ստեփանոսի Լեհացոյն. բայց ոչ զամենայն բանն Յովսէփոսի, այլ միայն զուր չատորս ի վրայից նորին:

Բ. Երանոս (Իրենէոս) հեանող առաքելոցն. ի Յունաց լեզուէ. Բանք Յաղագս զնացից առաքելոցն, եւ բանից Հերձուածողացն:

Գ. Եւսեբի Եկլեսիաստիկայ պատմագիրք երեք. առաջինն յԱզամայ մինչև ի Բրիտանի:

ԼԹ. BC բանիցն զհին: C Առաքելի: AB թուին: C կ'աւելցնէ.

(Խ.) Տէր Յովսէփ Զուղայեցոյն պատմագիրք, որ կոչի Բնիկոն, Աղայայ մինչ ի ՌՃԾ թիւն, յորս գոն զանազան առաքելքն ի վերայ աստուածայնոց արանց եւ պատմութիւնք Հայոց ի խնայեցն եւ թագաւորաց. եւ վասն ամենայն անցիցն անցելոց զոր տեսողացն է յայրնի:

(ՍԱ.) Խաչատուր վարդապետէ պատմագիրք վասն բունականութեանցն Պարսից, եւ թագաւորացն Նետոզաց, եւ վասն ժառանգութեանցն Հայոց, եւ նաշանդաց նոցին, այլ եւ զետոց, եւ լեբանց. Բ. Հատորս աւարեալ է՝ վասն անցելոցն, եւ ներկայիցն, զոր ունի պարսկաներեալ յինքեան, զբազում եւ զգանալան պատմութիւնս:

(ՍԲ.) Յակոբ Եսմիրեանէ Զուղայեցոյ՝ պատմագիրք Յորդորակ կոչեցեալ, յորս գոն պատմութիւնք, թագաւորաց, եւ ի ինանաց, եւ մանաւանդ վասն ժառանգութեանցն Հայոց, եւ բնականութեանց նոցայ, աշխարհագրութիւնք լեբանց եւ զաշտաց եւ զետոց...:

(Բ.) Այս վերնագրին փոխարէն C ունի իմ հատուածին վերջ. եւ զինչ ասացի պատմութեանցն այնոմանեալք գոն յայտ լեզուց ի մեր լեզուս:

Ա. C Յովսէփոս... եղև թարգմանեցեալ: B եղև սկ. BC սկսեալ ի (չունի) յետ Մակարայեցոց մինչ ի: A մինչև իմ: A իսկ եւ այլուր թարգմանեմ ունի նախ զա' ի Բ) հատորս (C հատորք). B կը շարունակէ են Բ. BC երանոսի հեանողի: A ստեփանոսի: C սակա առաքելոցն զորոցն եւ վասն բանից հ. կ'աւելցնէ Ս. Իբնէֆոսի Յաղագս զնացից առաքելոց ի: Գ. A եկլեսիաստիկայ պ. BC պատմագիրք էկլեսիաստիկայ այն է Զեքիաիստի Իստորիա, Եկեղեցա-

տոս. երկրորդն՝ ի Բրիտանոսէ մինչ ի Մեծն Կոստանդիանոս. եւ երրորդն՝ Վարք սրբոյն Կոստանդիանոսի: Գիրքս այս թարգմանեալ եղև ի յունական լեզուէ:

Դ. Աթանաս հայրապետին շարադրեալ զՎարս միանձանց եւ խոստովանողացն զուղղափառութիւն սուրբ հաւատոյ. որ ի Ղրտաց լեզուէ եղև թարգմանեալ ի սրբոց հարցն:

Ե. Եպիփան Կիպրացի. երկու գիրք ի Յունաց լեզուէ. յորոց առաջինն է Պատմութիւն նախահարց եւ մարգարէից. եւ երկրորդն՝ Բացայայտումն բանից ութսուն հերձուածողաց որք երեւեցան մինչև ի ժամանակս իւր: Բայց զիսելի է զի գիրք մի եւս անուամբ սորին գտանի խառն ճառից ընդ պատմութեանց, յորս գտանին բանք հերձուածողաց եւ շողփաղփութիւնք յուրվք. եւ ոչ հաւատայ զյաւիտեանական տանջանն. զորս խոտեալ է սրբոց Հարցն մերոց ընդ Գրոսոսկայ (Գորդոսոսկայ) եւ Կիրակոսակայ եւ ընդ Վարուց մանկութեան Տեանն եւ Մեկնութեանն Մանեայ եւ զայլոցն, զորս գրէ վարդապետն Կիրակոս⁴:

Զ. Արեւելեան վկայիցն պատմութիւնք. զոր թարգմանեալ է սրբոյն Արբահամու Խոստովանողի ի Պարսից լեզուէ, մինչ բանդարկեալ կայր ի Պարսիկս սակա խոստովանութեան սուրբ հաւատոյ:

Է. Սոկրատ. ի Կոստանդիանոսէ սկսեալ մինչև ի մահն Թէոդոսի Փոքու. հատորս կօթն. այս եւս ի Յունաց լեզուէ թարգմանեալ եղև. բայց յետոյ ի ժամանակս կաթոնական պատմութիւն, քարգամնուած ասորիքնէ. միւս գիրքն է Բրանիկոն կամ ժամանակական Կանոնք, քարգամնուած յաւարեմէ. իսկ երրորդք «Վարք Ս. Կոստանդիանոսի» չէ հասած մեզի, եթէ չէ Վարքն Սեդրեստոսի: C Գ հատոր. առաջին սկսեալ յԱ. B մինչ ի Բրիտանոս սկսեալ յազամայ: C կ. թագաւորին... թարգմանեցեալ:

Դ. C հայրապետն չունի շարադրեալ B չ. է: BC եւ խոստովանութիւն (C-թիւն) զուղղափառացն: AB զոր C չունի. B զվթաց չունի լեզուէ. C թարգմանեցեալ է ի զպտոց լեզուէ:

Ե. C չունի յորոց. BC չունին է: A բայցայտունն: B չունի բայց զիսելի է զի: B եւ զիւր մի եւս յանուն սորին կայ զոր այլք չինեալ են որպէս է վարուց զիրքն մանկութեան... Կիրակոս, զոր խոտեալ են սուրբ հարքն. C չունի բայց — Կիրակոս: A ի սրբոց:

Զ. C թարգմանեցաւ սրբոյն Արբահամու խոստովանողէ մինչ Բ. կայր... խոստովանութեանն սրբոյ հաւատոյ, ի Պարսից լեզուէ: A զոր BC կայր:

Է. BC սկսեալ ի Կոստանդիանոսէ մինչ ի (C մինչև Ե) ABC զայս եւս: B ի Յունաց է թարգմանեալ. C թարգմանեցաւ զոր համառոտեցաւ վասն ինդրոյ ներսեհի ի ինանին ի ժամանակս կաթոնականութեանն:

⁴ Կիր. Գանձակեցի, Վեներիկ 1865, էջ 29:

զիկոսութեան Անաստասայ ի խնդրոյ ներսեհի ի ինանին պատմագիրքս այս համառոտեցուցին. որ այժմ երկուքն եւս երեւին ի միջի մերում եւ անուանին Մեծ Սոկրատ եւ Փոքր:

Արք այս կօթն պատմագիրքս ի սրբոց թարգմանչացն եղև թարգմանեալ:

Ը. Պատմագիրք սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին որ ի Յունաց լեզուէ թարգմանեալ եղև ի ձեռն սրբոյն Գրիգորի Վկայասիրին:

Թ. Պատմագիրք սուրբ Ժողովոյն Եփեսոսի եւ Բաղկեդոնի եւ ամենայն Թուղթք որ ի նոսա ընթերցան, թարգմանեալ եղև ի Լատինացոց լեզուէ ձեռամբ Գէորգայ Կոստանդինուպոլսեցոյ ի ժամանակս թուականութեան Հայոց ՌՃԿ (1711)⁵:

Ժ. Հարանց վարուց (Պատմագիրք). ի Ղրտաց լեզուէ եւ ի սրբոյն Գրիգորի Վկայասիրէ (եղև թարգմանեալ):

ԺԱ. Պատմութիւն սրբոց Հայրապետացն եւ Վկայիցն, որ այժմ ձառնարկ կոչի, յայլ

Անաստասայ. եւ այժմ զերկուսն միայն երեւի զոր ասեն... եւ փոքր Սոկրատ: BC չունին ի միջի մերում: B չունի արգ. ABC զայս: C պատմագիրքն եւս ի թարգմանչացն եղև թարգմանեցեալ:

Ը. AB յոհաննու. C կ'աւելցնէ: այսինքն Վարքն եւ կեանքն նորին ի ծննդնէ մինչև ի մահն ի սրբոյն Գ. է Վ. է թարգմանեցեալ եղև ի Յունաց լեզուէ: AB զոր: B չունի լեզուէ:

Թ. C նաև ամենայն Թուղթք սրպէս... եւ թարգմանեցեալ... ի ժամանակս ՌՃԿ թ—եանն Հայոց: Ժ. B վարուցն ի զրոյս... զրիկորէ (A զրիկորի): Այս հատուածը քերականաբար կ'երեւայ: C չունի: ԺԱ. AB եւ յայլ: C Բ. բանասիրաց: B մատնեալին:

⁵ Այս տեղ յիշուած Գէորգ Վ. Կոստանդնուպոլսեցին է Մելայիմ օղլու կոչուածը, իր թարգմանութիւնը պահուած է Էմֆրազի թ. 1907 ձեռագրին մէջ, որ գրուած է 1754ին. ունի խորագիրս «Սուրբ եւ տիեզերագուծար Բ. Ժողովն Եփեսոսի ընդդէմ Փարիսնոսի երկարակ պատրիարքին Կոստանդնուպոլսոյ, արարեալ ի մեծ վկայէն Բրիտանոսի սուրբ Գրիգորոսէ հայրապետէն Աղեքսանդրիայու. արտահանեալ ի Գործոց զբէն Բաղկեդոնի Ժողովոյն. եւ թարգմանեալ ի Հելլենացոց լեզուէն ի հայ բարբառ ի Կոստանդնուպոլսեցի Գէորգ վարդապետէն ի մէջ Գարատանն Փարիզու մայրաքաղաքին Ֆրանսիայու. թուին Բրիտանոսի ՌՁԵ» (1705): Ուստի Գէորգ վարդապետ թարգմանած է միայն 449ի Եփեսոսի Բ. Ժողովին Գործերը հանելով «ի Գործոց զբէն Բաղկեդոնի Ժողովին»: Եւ եթէ Հելլենակ Եփեսոսի եւ Բաղկեդոնի «Ժողովոյն» Գործերու թարգմանութիւնը կը յիշէ կատարուած 1711ին, պէտք է նկատի առնել այդ Գործերու այն թարգմանութիւնը, որուն թարգմանիչն եղած է Յակոբ զվիր ձառնի օղլի, Եռետի թարգմանը, որ յոյն եւ լատին լեզուներէ թարգմանած է Չորս Տիեղերական Ժողովներու Գործերը, յընթացս 1711—1750 տարիներու (իւր այս թարգմանութեանց ճիշդ ասորին չէ ասանդուած): Բաղկեդոնի Գործերն ունինք վիեննայի թ. 721 ձեռագրին մէջ: Գէորգ եւ Յակոբ Կ. Պոլսեցիները ի միասին ուսած էին ի Պարիս ԺԼ. դարու առաջին տասնեակին:

եւ այլ լեզուէ թարգմանեալ եղև ի ձեռն բազմաց. իսկ յետոյ սուրբ հայրն Սողոմոն Մաքենից հաւաքեաց ի մի տուփ եւ անուանեաց Տօնական. քանզի մինչև ցայն ոչ գոյր ի մէջ մեր Յայտաւուրք:

ԺԲ. Յայտաւուրք եւ այլ ձառք սրբոց թարգմանեալ եղև ի Յունաց եւ յԱսորոց, ձեռամբ սրբոյն Գրիգորի Վկայասիրին: Իսկ յետոյ Գրիգոր Անաւարդեցին ձեռն արկեալ բազում ինչ այլայլեաց. եւ յետ նորա Գրիգոր Խլաթեցին որ կոչի Ծերէնց. որ այժմ վարի յեկեղեցոյ:

ԺԳ. Հարցունց գիրք սրբոյն Գրիգորի պապուն Հոռոմայ, որ է Պատմութիւն սրբոց ճգնաւորաց. չորս հատոր. ի Լատինացոց լեզուէ թարգմանեալ եղև ձեռամբ սրբոյն Ներսէսի Լամբրոնեցոյն:

ԺԴ. Միխայէլ պատմագիրք. յԱսորոց թարգմանեալ եղև հրամանաւ Կոստանդի մեծի կաթողիկոսին:

ԺԵ. Վիրք Պատմութիւն. ի Վրաց լեզուէ թարգմանեալ եղև. որ է յԱզամայ մինչև ԶԾ (1151) թիւն Հայոց:

ԺԶ. Գաւազանագիրք Լատինացոց. որ են Պատմութիւնք Յունաց կայսերաց եւ թագաւորացն Գոսանկաց եւ պապուցն Հոռոմայ. ի լատին լեզուէ թարգմանեալ եղև ի ժամանակս թագաւորութեան Ռուբենեանց:

Մասնա որք եւս Բանք պատմութեանց եւ Թուղթք գտանին, զորս ոչ եղաք, որպէս Աշխարհագիրքն եւ Հայելի վարուցն եւ այլք. կամ թէ եւս գտանին պատմութիւնք սուտք եւ առասպելք եւ վարք անպիտանք, որ ոչ են ի կարգի պատմագրաց, թողաք. այլ միայն

նից C մատենագրաց հաւաքելով... տօնական որ է յայտաւուրք. շարունակութիւնը չունի:

ԺԲ. B ճ. բազում չունի սրբոց: AB անարգաւեցին: B ձերեց: A զոր: C չունի այս հատուածը: ԺԳ. C ճ. Գրիգորի B չունի պապուն: A հոռոմայ: BC որ է Գ. հատոր պատմութիւն սրբոց ճ. (C պ. միանձանց) թարգմանեալ (C թարգմանեցեալ). դուրս ձգած են ի Լատինացոց լեզուէ: C չունի սրբոյն: A ներսէսէ: AC լամբրոնեցոյն C լամբրոնեցոյ:

ԺԵ. B չունի եղև C պատմութիւնն եղև թարգմանեցեալ ի Վրաց յազամայ: AB մինչև ԶԾ թուին: ԺԶ. BC որք են... եւ Լատինացոց Կ. չունին եւ թագաւորացն — եղև: A կայսերց: C չունի թագաւորութեանն: C ուրբենեան:

B Գոսանի եւս այլ պատմութիւնք զորս ոչ եղաք աստ բայց միայն որ հարկ էր մեզ գիտել զայն զրեցաք ի փառս մեծի սրբոյն Սիոնի. զոր եւ արժանի լիցուք ժառանգութեան նորին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Տէր Սաճէլ: Տէր Փիլիպոս Վ.: C դուրս քողոցած է ամբողջը: Բայց ի լրումն նախորդին կ'աւելցնէ ԺԵ—ի հատուածները հանդերձ վերջաբանով:

զհարկաւորացն բուն արկեալ ի վերուստ յետ մարդեղութեան Տեառն՝ կարգաւ իջաք, թէ ի մերոց վարդապետաց պատմարանեալքն եւ թէ յայլ լեզուացն ի մերս թարգմանեալք: Եւ զայս ի փառս մարմնացելոյ Բանին Աստուծոյ, ընդ Հօրն երկնաւորի եւ սուրբն Հոգւոյն ճշմարտի, երբ յաւիտենիւ. ամէն:

(Յաւելուածք C օրինակի)

Ժէ. Վէժ գայթակղութեանն. Բ. հատոր. առաջին պատմէ գալատառուհն եկեղեցեաց արեւելեանի եւ արեւմտականի. եւ երկրորդն պատմէ զխոզովութիւնս փափիցն ընդ թագաւորացն Գալլիացոց. եւ այլոցն եւրօպէականաց, ԽԳ գլխով, եւ է յօղուածովք բաժանեցեալ ի յունական լեզուէ:

ԺԸ. Պատմութիւնք Սինէացոց թարգմանեալ ի Մարգարէ Շահրիմանցոյ Նոր Զուրայու, լեզուէ յանկլիականէ ի հայս ԻԳ գլխով որպիսութիւն քաղաքաց, վարուց նոցա, եւ պետութեանց կառավարմանց նոցա, ելից եւ մտից բնական օրինաց, եւ քաղաքական աւանդութեանց նոցա, եւ բնասիրութեանց եւ կայսերականացն պերճութեանց. ի ՌՄՊԲ թուին Հայոց:

ԺԹ. Պատմագիրք Նազիր շահին թարգմանեալ է ի Պողոսէ Միրզայեան Համթեցոյ ի յԱնգլիացոց լեզուէ ի հայս:

Ի. Պատմագիրք ինչ՝ Չամչեանց Միքայէլէ Պօլեցոյ, յԱզամայ մինչեւ ի ՌՄԼԵ թիւն, գիրք երեք, եւ 6 հատոր, զոր ճշմարտութիւնն յայտնի է բազում տեղիս:

Բայց որովհետեւ գիրն յազգիս մերոյ իբր սեռ գոլ երեւի, ոմն պատմագիրն տեսակ համաթուի, վասն որոյ զոմանս զանյայտս յիշել մարթ վարկայ՝ վասն ծանօթութեանց եւ խնդրոց ոմանց:

Գ.

Վասն պատմագրաց Հայոց:

Այստեղ կը գետեղեմ նոր ցանկ մ'ալ Պատմագիրներու, զոր գտած եմ Անթիլիասի կաթողիկոսարանի վերոյիշեալ ձեռագրին մէջ, թղ. 107բ—108բ: Հետաքրքրական է Յանկա իր նոր անուններով: Առաջին անգամ հոս կը տեսնուի Երեմիա Չէլչպի Բէժմիւրճեանի պատմական գրուածքներու ցանկը, որ ուշագրութեան արժանի է: Այն հանուած է, ինչպէս կ'երեւայ, Երեմիայի մէկ հաւաքածոյ ձեռագրէ:

1. Եւսերի ի Յունաց թարգմանեալ եկեղեցական.
2. Ազաթանգեղոս.
3. Բիւզանդ.
4. Սոկրատ.
5. Մովսէս Պորենացի.
6. Ղազար.
7. Կորիւն.
8. Եղիշէ.
9. Փոստոս (= 3).
10. Զենոբ.
11. Արիստակէս.
12. Շապուհ.
13. Յովհաննէս կաթողիկոս.
14. Ղեւոնդ էրէց.
15. Հերակլ (= Սերիոս).
16. Ուխտանէս.
17. Ստեփաննոս.
18. Վահրամ¹.
19. Մխիթար.
20. Յակոբ.
21. Եսայի.
22. Սարգիս.
23. Վանական.
24. Մատթէոս էրէց.
25. Սամուէլ էրէց.
26. Դանիէլ.
27. Մատթէոս.
28. Վարդան.
29. Կիրակոս.
30. Հեթում.
31. Թօմաս եւ Առաքել.
32. Վարդան յետին պատմագիր:
33. Իսկ Երեմիայի՝
 - ա. զՄաճարացն եւ
 - բ. զԱնգլիոյն.
 - գ. զՍոււտ Բրիտանիան եւ
 - դ. զՍուլթան Մահմէտին.
 - ե. զՕսմանցոցն Գ. հատորս. եւ
 - զ. զԼանկ Թամուրին².
 - է. զՊալիֆայիցն Պաղտատայ եւ
 - ը. զՊարսկացն.
 - թ. զՀոմայեցոց եւ
 - ժ. զՅունաց.
- ժա. զՆոր նահատակացն եւ
- ժբ. զՀրկիզութիւն Ստամպոլոյ.
- ժգ. զԱմերիկային եւ
- ժդ. զԱնաուտին.

¹ 2. վայրամ,
² 2. թամփուրին:

- ժե. զՀամառօտ Օսմանցոն.
- ժզ. զԲագրատունեացն եւ
- ժէ. զԿիլիկեցոցն համառօտ.
- ժը. զՄովսիսին համառօտ եւ
- ժք. զՉուառութիւնս Հայոց. եւ ի. զԺամանակագիրս. եւ իա. զԱշխարհացոյց. եւ իբ. Արարողութիւնք ոմանց ազգաց. եւ այլ բազումք. ըստ որում եւ սոյն մատենա մասնաւորապէս ժողովեալ:

Միխայէլ կաթողիկոս էր Ասորոց. որք ծանօթացեալ՝ Վարդան վարդապետն եւ թարգմանել զնորա Պատմութիւնն յԱսորոց ի Հայոց լեզու:

3. Յուցակ գրոց Ամիրսուլու վանաց:

Վարդան Բաղիշեցոյ զբասիրութեան գեղեցիկ գրաւականն է Գրացուցակը Ամիրզօլի վանքին, զոր կազմած է անձամբ, ինչպէս վերնագիրս ցոյց կու տայ:

«Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրզօլու՝ համարով անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետի:

Սկ. «Ա. նախ .ե. Աստուածաշունչ, որոց յատկութիւն այս է... վջ. ա. Սիւնց. Առքին. (Սիւնեցի Առաքելին) երկար տող եւ ոտանաւոր վասն սուրբ Լուսաւորչին եւ Ներսիսի Հայրապետին եւ Յովակիմայ եւ Աննայի (այս ոտանաւորներու բուն հեղինակն է Առաքել Բաղիշեցի): Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն»:

= Էջմիածին, Թ. 737, թղ. 223բ—232բ: Հրատարակած Ս. Տէր-Յակոբեան, Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ Յուցակ գրոց Ամիրզօլու վանոց. Արարատ, 1903, էջ 176—178 (Յատաջարան), 178—189 (բնագիր): Յանկուած են 193 գիրք կամ հատորներ, ձեռագիր եւ տպագիր:

4. Գիրք Աղօթից:

Սխալմամբ կամ շփոթութեամբ Վարդան Բաղիշեցոյ վերագրուած է Աղօթագիրք մը այսպիսի խորագրով. «Գիրք Աղօթից արարեալ երանելոյն Վարդանայ սրբազան վարդապետի Բաղիշեցոյ, ի պէտս աղօթասիրաց ազգիս: Կ. Պոլիս 1841:

Մկրտիչ եպ. Աղանունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, էջ 503—504, ուշագիր եղած է, որ Աղօթագիրքս 1841ի տպա-

գրութեան մէջ սխալմամբ Բաղիշեցոյ ընծայուած է, բայց ինքն ալ կը սխալի, երբ զայն 1321ին ապրող Վարդան Արեւելցոյ մը կը վերագրէ: 1734ի տպագրութեան մէջ անոր հեղինակը ցոյց տրուած էր «Երանելոյն Վարդանայ վարդապետի», որ Այգեկցին է:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԳՆՈՒՆԵԱՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն):

Փարպեցիին մօտ Ատոմի մասին բաւական շատ տեղեկութիւններ կը գտնուին: Կը յիշէ թէ՛ Վարդանանց ատեն «տէչն Գնունեաց Ատոմ» կը մասնակցի Աշտիշատի ժողովին եւ ստորագրութիւնը կը դնէ Յագկերտի ուղղուած թուղթին: Իսկ Վարդան Մամիկոնեանի ետուզեա գործունէութեան շրջանին եւ անոր մահէն վերջ անմիջնորդաբար տեղի ունեցած անցքերու եւ դէպքերու ատեն Փարպեցին Ատոմ Գնունին չի յիշեր, այլ անոր տոհմէն՝ «Երանելին Վահան» որ Աւարայրի ճակատամարտին մէջ մարտիրոսական պսակով կը փառաւորուի (համա. վարդ. եւ Եղիշէ՝ «յազգէն Գնունեաց մանուկն Վահան երիւք արամբք», էջ 225): Բայց կաշանաւորուած նախարարներու շարքին կը հիւսէ նաեւ Ատոմի անունը (էջ 273): Իսկ Վահանեանց ժամանակ անոր մասին ստէպ կը խօսի: Ահա՛ Ատոմ իր Առաստոմ եղբոր հետ Վահան եւ Վասակ Մամիկոնեաններու եւ Սահակ Բագրատունիի կողքին՝ հաւատարիմ ընկեր է խաղաղութեան ժամերուն եւ պատերազմի արհաւիրքներուն մէջ: Ահա՛ Ատոմ Կռուակս գիւղի մէջ Վասակ Մամիկոնեանի հետ, թէեւ Ատրվշնասպէն անսպասելի յարձակում կը կրէ, սակայն Վասակի խոհեմութեամբը վտանգէն կը գերծանի եւ Ակոռիի մօտ 481ին ալ թեւը կը վարէ՝ օգնական ունենալով Առաստոմ եղբայրը: Պարսկական բանակը մինչ կը կարծէ թէ հայազունը փոքրիկ ջոկատը «խելացնորեալ ի խնդիր մահու եկեալ է», Հայերը քաջաբար կը մաքառին եւ «Ատրվշնասպ անկեալ սատակէր»: Ատոմ եւ Առաստոմ ուխտագրութ Գեհհոն Սիւնին,